

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ստեփանյան Լուսինե Սամվելի

**ԱԳՐԵՄԻՎ ՎԱՐՔԻ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
(32 ժամ, 3 կրեդիտ)**

ԵՐԵՎԱՆ

Հեղինակային հրատարակչություն
2013

**ՀՏԴ 159.9 (072)
ԳՄԴ 88
Ս 887**

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի գիտական խորհուրդը

**Գրախոսներ՝ հոգ. գիտ. դոկտոր, պրոֆ. Հ.Ս. Ավանեսյան
հոգ. գիտ. թեկն., դոցենտ Վ.Ռ. Պապոյան**

Հեղինակ՝ կենս. գիտ. թեկն. Ստեփանյան Լուսինե Սամվելի

**Ս887 Ազրեսիվ վարքի հոգեբանություն:
Մագիստրատուրայի դասընթացի մեթոդական ուղեցույց
/Լ. Ստեփանյան; ԵՊՀ.-Եր.: Հեղ.հրատ., 2013.- 79 էջ:**

«Ազրեսիվ վարքի հոգեբանություն» մեթոդական ուղեցույցում նկարագրված են ազրեսիվ վարքի ձևավորման և զարգացման ընդհանուր հոգեբանական մեխանիզմների և օրինաչափությունների մասին ժամանակակից պատկերացումները ու տեսությունները, ինչպես նաև ազրեսիայի կառուցվածքն ու ձևերը, նրա դրսևորումները, ազրեսիվ վարքի ախտորոշման և շտկման մեթոդաբանությունները, մեթոդներն ու մեթոդիկաները:

**ՀՏԴ 159.9 (072)
ԳՄԴ 88**

ISBN 978-9939-0-0895-0

© Ստեփանյան Լ.Ս., 2013

Բովանդակություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
«ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ	8
ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	9
ԹԵՄԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	37
ԲԱԺԻՆ 1. ԱԳՐԵՍԻՎԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ:.....	37
Թեմա 1.1. Ներածություն ագրեսիվ վարքի հոգեբանություն: Ագրեսիվ վարքի հոգեբանության առարկան, նպատակը և խնդիրները:.....	37
Թեմա 1.2. Ագրեսիայի կառուցվածքը, բաղադրիչները և տեսակները:.....	38
ԹԵՄԱ 2. ԱԳՐԵՍԻՎԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ:.....	39
Թեմա 2.1. Գենետիկական-էվոլյուցիոն մոտեցումը ագրեսիայի խնդրին:	39
Թեմա 2.2. Բիոեվլիորիստական մոտեցումը ագրեսիայի խնդրին.....	40
Թեմա 2.3. Էթիկա-հումանիստական մոտեցումը ագրեսիայի խնդրին:	40
ԹԵՄԱ 3. ԱԳՐԵՍԻՎԱՅԻ ՍԻՍԵՄԱՏԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ:.....	41
Թեմա 3.1 Ագրեսիվ վարքի ուսումնասիրումը հարցման մեթոդի օգնությամբ:.....	41
Թեմա 3.2. Դիտման մեթոդը ագրեսիվ վարքի ուսումնասիրման մեջ:	42
ԹԵՄԱ 4. ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ՁԱՎՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	43

Թեմա 4.1. Ագրեսիվ վարքի ձևավորման ներքին նախադրյալները:	43
Թեմա 4.2. Ագրեսիվ վարքի ձևավորման արտաքին նախադրյալները:	45
ԲԱԺԻՆ 2. ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՇՏԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ:.....	46
ԹԵՄԱ 5. ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ և ՇՏԿՈՒՄ:	46
Թեմա 5.1. Ագրեսիվ վարքի նախադրվածության ախտորոշում:.....	46
Թեմա 5.2. Ագրեսիվ վարքի կանխարգելիչ միջոցներ և ագրեսիայի կառավարում:	48
Թեմա 5.3. Ագրեսիվ վարքի հոգեթերապիա և հոգեշտկում:	49
«ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:	50
ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ	55
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	57
ՀԱՎԵԼՎԱԾ	61

**«ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առարկան դասավանդվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Արտակարգ իրավիճակների, ճգնաժամային վիճակների հոգեբանություն» մագիստրոսական ծրագրի շրջանակներում՝ որպես հիմնական դասընթաց: Առարկայի ուսուցանումը հիմնվում է «Ընդհանուր հոգեբանություն», «Սոցիալական հոգեբանություն», «Տարիքային հոգեբանություն», «Անձի հոգեբանություն», «Հոգեֆիզիոլոգիա», առարկաների սահմանագծերում ձեռքբերված գիտելիքների վրա:

«Ագրեսիվ վարքի հոգեբանություն» առարկան հիմնված է ագրեսիվ վարքի ձևավորման և զարգացման ընդհանուր հոգեբանական մեխանիզմների և օրինաչափությունների մասին ժամանակակից ընդհանուր պատկերացումների ու տեսությունների վրա: Տվյալ դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են ինչպես ագրեսիայի կառուցվածքն ու ձևերը, նրա դրսևորումները, այնպես էլ ագրեսիվ վարքի ախտորոշման և շտկման մեթոդաբանությունները, մեթոդներն ու մեթոդիկաները:

Ծրագրում ընդգրկված գործնական աշխատանքները կոչված են ստեղծել տեսական նյութի խորը ուսումնասիրությունների, ինչպես նաև ինքնուրույն հետազոտությունների անցկացման համար պայմաններ, որոնք ուսանողներին թույլ կտան ցանկացած իրավիճակում ինքնուրույն վերլուծել, մշակել, ծրագրավորել և կիրառել համապատասխան հնարներ՝ ագրեսիվ վարքը ախտորոշելու և շտկելու համար:

Առարկայի հիմնական **նպատակն է** հանդիսանում ձևավորել ամբողջական պատկերացում ագրեսիվ վարքի հիմնական տեսական և կիրառական մոտեցումների և օրինաչափությունների մասին, նրա տեսակների և առանձնահատկությունների, ինչպես նաև ախտորոշման, հսկման, կանխարգելման և շտկման մեթոդների մասին:

Տվյալ դասընթացի **խնդիրներն են՝**

1. ծանոթացնել ուսանողներին հոգեբանության մեջ ագրեսիվ վարքի տեսական մոտեցումներին և ուսումնասիրվածության աստիճանին;
2. ծանոթացնել և սովորեցնել ագրեսիվ վարքի և ագրեսիայի ուսումնասիրության առավել մշակված մեթոդներին,
3. ակտիվացնել ուսանողների ինքնուրույնությունը կիրառական գիտելիքների և հմտությունների ձեռքբերման գործընթացում:

Դասընթացում հատուկ շեշտադրվում են ագրեսիվ վարքի շտկման նոր ռազմավարությունների և մոդելների քննարկումը, մշակումը և վերլուծությունը:

Կրթական արդյունքները

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողները պարտավոր են.

1. Պատկերացում ունենալ հոգեբանության մեջ առկա հիմնական տեսությունների մասին, որոնք առնչվում են ագրեսիվ վարքի հիմնախնդրի հետ,
2. Պատկերացում ունենալ ագրեսիվ վարքի տարիքային, սեռային և ազգային առանձնահատկությունների մասին,
3. Իմանան ագրեսիվության, որպես անձնային բնութագրի կառուցվածքագործառնական առանձնահատկությունները,
4. Կարողանան վերլուծել տարբեր ներքին և արտաքին գործոնների ազդեցությունը ագրեսիվ վարքի ձևավորման և զարգացման վրա,
5. Պատկերացում ունենալ ագրեսիվ վարքի դրսևորման առանձնահատկությունների և պատճառահետևանքային կապերի մասին,
6. Տիրապետել ագրեսիվ վարքի ախտորոշման և շտկման մեթոդներին, հնարավոր ուղղություններին,
7. Կարողանան պրակտիկայում օգտագործել ստացված գիտելիքները ագրեսիվ վարքի ախտորոշման և շտկման համար:

Ձեռք բերել հետևյալ մասնագիտական հմտությունները

1. Ազրեսիվ վարքի և ազրեսիվության կառուցվածքի բացահայտման, և ուժգնության գնահատման հմտություններ,
2. Հաշվի առնելով տարիքային, սեռային և ազգային առանձնահատկությունները համապատասխան շտկում անցկացնելու հմտություններ,
3. Ազրեսիվ վարքի սոցիալ-հոգեբանական հետազոտությունը կազմակերպելու, հետազոտական արդյունքները վերլուծելու և ներկայացնելու, ինչպես նաև մասնագիտական առաջարկներ ձևակերպելու հմտություններ:

Գիտելիքների ստուգման համակարգը:

Ուսումնական առարակայի գումարային արդյունքը ստացվում է հետևյալ բաղադրիչներից.

- Մասնակցություն դասերին 2 միավոր,
- Ինքնուրույն էսսեի կամ ռեֆերատիվ աշխատանքի կատարում՝ գնահատվում է առավելագույն 4 միավոր,
- Մեկ ընթացիք գրավոր ստուգում, աշխատանքը գնահատվում է առավելագույն 4 միավոր,
- Բանավոր քննություն, որը ենթադրում է պատասխաններ ստուգողական հարցերին՝ ընդհանուր միավորը՝ 10 միավոր:

Ուսուցման հիմնական ձևերը

Ուսանողների տեսական պատրաստվածության հիմքը դասախոսություններն են, սեմինարները, որոնք վերաբերվում են դասընթացի առավել արդի հիմնախնդիրների քննարկմանը և նպաստում են ուսանողների մոտ գիտական հիմնախնդիրների ինքնուրույն վերլուծության հմտության ձևավորմանը: Գործնական պարամունքների ընթացքում տեղի է ունենում ազրեսիվ վարքի ավտորոշման և շտկման հստակ մեթոդների քննարկումն ու կիրառումը: Դասընթացի ընդհանուր ժամաքանակը 32 ժամ է: Դասընթացը ընդգրկում է 20 ժամ դասախոսություն և 12 ժամ գործնական աշխատանքներ: Առարկան մագիստրոսական շրջանակներում տրամադրում է 3 կրեդիտ:

**«ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ
ԹԵՄԱՏԻԿ ԴԼԱՆ**

	ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴԱՏ.	ԳՈՐԾՆ	ԸՆԹԱՑԻԿ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ
1	Ագրեսիայի հիմնախնդիրները հոգեբանության մեջ:	2		
1.1	Ներածություն ագրեսիվ վարքի հոգեբանություն, առարկան, նպատակը և խնդիրները:			
1.2	Ագրեսիայի կառուցվածքը, բաղադրիչները և տեսակները:			
2	Ագրեսիայի ուսումնասիրման հիմնական տեսական մոտեցումները և մոդելները:	6	2	
2.1	Գննետիկական-էվոլյուցիոն մոտեցումը ագրեսիայի խնդրին:	2		
2.2	Բիհեվիորիստական մոտեցումը ագրեսիայի խնդրին:	2		
2.3	Էթիկահումանիստական մոտեցումը ագրեսիայի խնդրին:	2		
3	Ագրեսիայի սիստեմատիկ ուսումնասիրման մեթոդները:	2	2	
3.1	Հարցումային մեթոդը ագրեսիվ վարքի ուսումնասիրման մեջ:			
3.2	Դիտման մեթոդը ագրեսիվ վարքի ուսումնասիրման մեջ:			Գրավոր հարցում
4	Ագրեսիվ վարքի ձևավորման առանձնահատկությունները:	8	2	
4.1	Ագրեսիվ վարքի ձևավորման ներքին նախադրյալներ՝ կենսաբանական և անհատահոգեբանական գործոնները:	4		
4.2	Ագրեսիվ վարքի ձևավորման արտաքին նախադրյալներ՝ սոցիալական գործոններ, ֆիզիկական երևույթներ: ԶԼՄ-ների, համակարգչային խաղերի ազդեցությունը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:	4		
5	Ագրեսիվ վարքի ախտորոշում և շտկում:	2	6	
5.1	Ագրեսիվ վարքի նախադրվածության ախտորոշում:		2	
5.2	Ագրեսիվ վարքի կանխարգելիչ միջոցներ և ագրեսիայի կառավարում:		2	
5.3	Ագրեսիվ վարքի հոգեթերապիա և հոգեշտկում:		2	Բանավոր հարցում
	Այցելություն	Բանավոր հարցում	Գրավոր հարցում	քննություն
միավորը	2	4	4	10

Ներածական դասախոսություն

Մարդկանց կյանքի բազմամակարդակ սոցիալտնտեսական պայմանները, նախկին աշխարհայացքի կործանումը և նորի չճանաչվածությունը, անհրաժեշտ հմտությունների և կարողությունների բացակայությունը բերում է լուրջ դժվարություններին և ներքին կոնֆլիկտների առաջացմանը: Մարդիկ հանդիպում են բազմաթիվ երևույթների, որոնք իրենց հետքն են թողնում մարդու հոգեկանի վրա՝ տեղի է ունենում շատ պատկերացումների, դիրքորոշումների, ցանկությունների և սովորությունների խախտում, զգացմունքների մի տեսակներին փոխարինում են մեկ այլ զգացմունքներ: Մարդկանց մոտ ձևավորվում են այլ մարդկանց նկատմամբ թշնամական ներքին տեսակետներ: Եվ նման մարդիկ ագրեսիվ վարքը համարում են կիրառելի, քանի որ չեն գտնում այլընտրանքային վարքային ձևերը իրենց խնդիրները լուծելու համար: Ագրեսիվ վարքի հոգեբանության ամենակարևոր խնդիրներից մեկը հանդիսանում է մարդկանց բազային սոցիալական կարողությունների ընդլայնմանն ուղղված մեթոդների ծանոթացումը և ուսումնասիրումը:

Ագրեսիա հասկացությունը:

Ագրեսիան հանդիսանում է մարդկային հոգեկանի ուսումնասիրման կենտրոնական խնդիրներից մեկը: «Ագրեսիա» թերմինը առաջացել է *aggredi* բառից, որի արմատը *adgradi* կազմված է երկու մասերից (*gradus*, որը նշանակում է «քայլ», իսկ *ad* – «վրա»), այսինքն «շարժվել...վրա»: Ագրեսիվ լինելը նախկինում մեկնաբանվում էր «շարժվել նպատակի ուղղությամբ առանց վախի, կասկածանքի և դանդաղեցնելու»: Մարդկային ագրեսիայի բնությունը բարդ է ըստ իր դրսևորման և պայմանավորված է ինչպես կենսաբանական, այնպես էլ հոգեբանական և սոցիալական խնդիրներով: XXI դարի սկզբին մեծացել են ագրեսիայի խնդրին նվիրված հետազոտությունների, տպագրությունների, գիտաժողովների քանակը: Դեռ Արիստոտելը, Պլատոնը, Սոկրատը, Զառատուստրան և նրանց հետևորդները անդրադարձել են ագրեսիայի խնդրին: Վերջին տարիներին ագրեսիայի ուսումնասիրումը նոր զարգացում է ստացել, կապված այն բոլոր բնակլիմայական և սոցիալական փոփոխությունների հետ, որոնք

այս կամ այն չափով ազդում են մարդկային ագրեսիայի զարգացման վրա: Ընդ որում, ագրեսիան ուսումնասիրվում է տարբեր մասնագետների կողմից, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է մոտենում ագրեսիայի խնդրին: Այսպես օրինակ, կենսաբանները ագրեսիայի նկարագրման ժամանակ շեշտը դնում են գլխավորապես ագրեսիայի նպատակի և գործառույթների վրա՝ հարմարվողական և ոչ հարմարվողական; նյարդաֆիզիոլոգները՝ ագրեսիվ վարքի հիմքում ընկած նյարդային մեխանիզմների վրա; հոգեբույժները ուսումնասիրում են ագրեսիայի դրսևորումները շեղումներ ունեցող մարդկանց մոտ; հոգեբանները դիտարկում են ագրեսիան խիստ վարքային տեսանկյունից, ագրեսիան դիտարկելով որպես դիտվող երևույթ; սոցիոլոգները հետաքրքրվում են թե ինչպիսի հասարակական երևույթներ կարող են ծնել ագրեսիա և այլն (Румянцева, 1991a):

Այսպիսով, ներկայումս շատ գիտնականների կարծիքով, ագրեսիան դա մի երևույթ է, որը պահանջում է միջդիսցիպլինար ուսումնասիրություններ (Румянцева, 1991; Незнанов, 1994): Վ. Նեզնանովը նշում է նաև ագրեսիոլոգիայի, որպես առանձին գիտության ստեղծման մասին, որը թույլ կտա բազմակողմանի ուսումնասիրել ագրեսիայի երևույթը, և ստանալ շատ հարցերի պատասխաններ, որն էլ իր հերթին թույլ կտա գտնել ագրեսիայի շտկման և կանխարգելման առավել օպտիմալ ուղիները, որի վերջնական նպատակն է հանդիսանում մարդու հոգեկանը և որպես հետևանք ֆիզիկական առողջության պահպանումը:

Ժամանակակից հոգեբանության մեջ անձի ագրեսիվության խնդիրը դիտարկվում է որպես բիպոլյար երևույթ: Մի կողմից ագրեսիվությունը, որպես անձնային որակ հանդիսանում է մարդու ակտիվության և ադապտիվության անբաժան դինամիկ բնութագրերից մեկը, որը նորմայի սահմաններում անհրաժեշտ է և սոցիալապես ընդունելի: Սակայն դրա չափազանց կամ անբավարար դրսևորումը կարող է ունենալ բացասական հետևանքներ: Հիպերագրեսիվությունը կարող է դրսևորվել ագրեսիվ վարքի ձևով, օրինակ, ծեծկռտուքներ, վեճեր, վիրավորանքներ, հոգեկան բռնություններ, կոնֆլիկտների հրահրումներ, քայքայիչ գործողություններ, պաթոլոգիական երևակայություններ: Հիպոագրեսիվությունը բերում է ընկճվածության, ենթարկվելիության, կոնֆորմության,

վարքի պասիվության: Համաձայն ինչպես մեր, այնպես էլ արտասահմանյան հեղինակների կարծիքի Է.Վազենասի (1995), Յու.Եգոշկինի (1995), Գ.Պարենսի (1997), Պետրովի (1999), Վ. Գրիգորյանի (2005), Լ.Ստեփանյանի (2007) և այլն, և հիպո- , և հիպերագրեսիվությունը պահանջում է այնպիսի շտկողական միջոցառումների մշակում, որոնք ուղղված կլինեն ինչպես ագրեսիայի նվազեցմանը, այնպես էլ բարձրացմանը մինչև օպտիմալ մակարդակ, որը չի քայքայի անձը, որպես ամբողջական համակարգ, ոչ էլ շրջապատողներին վնաս կպատճառի:

Մարդկային ագրեսիվության ուսումնասիրման ընդհանուր և կարևոր հարցերից մեկն է հանդիսանում այս հասկացության նշանակության և իմաստի հստակեցումը:

Ագրեսիա ասելով, հասկանում ենք թշնամանքի, հարձակման, քայքայման, ջախջախման գործողություններ, այսինքն այնպիսի գործողություններ, որոնք վնաս են հասցնում այլ մարդու կամ օբյեկտի: Տարբեր գիտնականների կողմից առաջարկված է ագրեսիայի բազում սահմանումներ, սակայն դրանցից ոչ մեկը չի կարող համընդհանուր և սպառիչ լինել: Այսպես օրինակ, Լ.Բենդերը (Bender L., 1963) նկարագրում է ագրեսիան որպես օբյեկտին մոտենալու կամ նրանից հեռանալու միտում, իսկ Ֆ. Ալանը (Allan F., 1964) դիտարկում է այն որպես ներքին ուժ (չբացատրելով նրա ծագումը), որը տալիս է մարդուն հնարավորություն հակազդել արտաքին ազդեցություններին: Ռ. Բերոնը (2007) ընդգծում է, որ ագրեսիվ գործողություններ կարող են համարվել միայն այն գործողությունները, որոնք վնաս են պատճառում կենդանի էակներին: Սակայն, ինչպես նշում է Ա. Ռեանը (1999), ինչպես՝ ս պետք է մեկնաբանվի օրինակ վեճի ժամանակ սպասքի կոտրելը: Եվ նա հստակեցնում է, որ վնասը կարող են պատճառել մարդուն նաև վնաս պատճառելով յուրաքանչյուր օբյեկտին, որի վիճակից կախված է մարդու ֆիզիկական և հոգեկան բարեկեցությունը: Միևնույն ժամանակ Է. Ֆրոմը ագրեսիան սահմանում է, որպես մարդուն կամ կենդանում, կամ անկենդան օբյեկտին կանխամտածված վնասի պատճառում (Фромм, 1998): Համաձայն այս սահմանման ագրեսիային վերաբերվում են բոլոր քայքայիչ գործողությունները՝ ավազակի սպանությունը և նմանատիպ դեպքեր, և այս դեպքում դրանք բոլորը պետք

է ունենան նույն դրդապատճառը և ընդհանուր հոգեբանական ծագում: Ա. Ռեանը առաջարկում է ագրեսիան դիտարկել, որպես “յուրաքանչյուր կանխամտածված գործողություն, որն ուղղված է այլ մարդու, մարդկային խմբերին և կենդանիներին վնաս պատճառելուն” (Реш, 1999): Խ. Խեկխաուզենը սահմանում է ագրեսիան, որպես “տարաբնույթ գործողությունների բազմություն, որոնք խախտում են այլ մարդու կամ մարդկային խմբերի ֆիզիկական կամ հոգեկան ամբողջականությունը, հասցնում են նրան նյութական վնաս, խոչընդոտում են նրա մտադրությունների իրականացմանը, հակառակվում են նրա հետաքրքրություններին կամ էլ տանում են նրա ոչնչացմանը” (Хеккаузен, 1986):

Խ. Դելգադոն (Delgado, 1963) պնդում է որ, “մարդկային ագրեսիան” դա վարքային հակազդում է, որը բնութագրվում է ուժի դրսևորմամբ անձին կամ հասարակությանը վնաս հասցնելու փորձի ժամանակ:

Համաձայն Բասի առաջարկած սահմանման ագրեսիան ցանկացած վարք է, որը պարունակում է սպառնալիք կամ այլոց վնաս է պատճառում (Buss, 1971): Մի շարք գիտնականների (Berkowitz, 1974, 1981; Feshbach, 1970 և այլն) կողմից առաջարկված մեկ այլ սահմանման համաձայն՝ որպիսի այս կամ այն գործողությունները որակավորվեն որպես ագրեսիվ, նրանք պետք է իրենց մեջ ներառեն վիրավորելու միտում, այլ ոչ թե ուղղակի բերեն այդպիսի հետևանքների: Ըստ Զիլմանի (Zillmann, 1979) ագրեսիան ուրիշներին մարմնական կամ ֆիզիկական վնասվածքներ հասցնելու փորձն է:

“Հոգեբուժական և հոգեկան առողջությանն վերաբերվող եզրույթների բառարանում» բերվում է ագրեսիայի հետևյալ սահմանումը “Ագրեսիան վնաս հասցնող վարք է, որն ուղղված է այլ մարդկանց կամ իրեն և դրդված է թշնամանքով, զայրույթով և մրցակցությամբ» (Словарь психиатрических и относящихся к психическому здоровью терминов, 1991)

Ըստ Ռ. Բերոնի և Դ. Ռիչարդսոնի կարծիքի “ագրեսիան, իր յուրաքանչյուր դրսևորման մեջ, իրենից ներկայացնում է այլ կենդանի էակին ուղղված վնասի պատճառում, որը ունի բոլոր հիմքերը նմանատիպ վերաբերմունքից խուսափելու համար”: Այս սահմանումը ներառում է իր մեջ կանխամտածված, նպատակա-

ուղղված վնասի պատճառում զոհին և զոհը պետք է խուսափի նմանատիպ վերաբերմունքից: Սակայն այս սահմանումը ևս ունի թերություններ, քանի որ, օրինակ այնպիսի դեպքեր, ինչպիսին են էֆտանագիան, ռիտուալ կրոնական սպանությունը, ակամա կրակոցը և այլն մի կողմից հանդիսանում են ագրեսիվ գործողություններ, բայց մյուս կողմից նրանք նպատակ չեն հետապնդում վնաս պատճառել ուրիշին կամ իրենց:

Կ. Իզարդը ագրեսիայի սահմանման մեջ օգտագործում է թշնամանք հասկացությունը՝ “Ագրեսիան դա ֆիզիկական գործողություն է, որը կարող է արձակվել և պահպանվել թշնամանքի համալիրի մեջ մտնող հույերով, այն կատարվում է այլ մարդուն կամ իրեն վնաս պատճառելու կամ վիրավորելու նպատակով” (Изард, 2000): «Ֆիզիկական գործողություն» հասկացության մեջ Իզարդը ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ վերբալ գործողությունները: Իսկ հասցվող վնասը, ըստ նրա կարծիքի կարող է լինել ֆիզիկական և հոգեբանական՝ հարված մարմնին կամ ինքնասիրությանը: Այսինքն թշնամանքը դիտարկվում է որպես դրդապատճառային վիճակ, իսկ ագրեսիան կարող է ցուցադրվել թշնամանքի վիճակով:

Տարբեր հեղինակներ ագրեսիայի սահմանման մեջ առանձնացնում են հետևյալ չափանիշները՝ ուժի գործադրում, այլ սուբյեկտին վնասի պատճառում, դրդապատճառային ասպեկտ և այլն:

Այսպիսով, ներկայումս հոգեբանների մեծամասնության կողմից ընդունվում է հետևյալ սահմանումը. “Ագրեսիան վարքի ցանկացած ձև է, որն ուղղված է վնաս պատճառելուն կամ վիրավորելուն այլ կենդանի էակին, որը չի ցանկանում նման վերաբերմունք (Հոգեբանական բառարան, 1996): Ընդ որում, վնասը կարող է ինչպես ուղղակի (հարձակում), այնպես էլ անուղղակի (վատաբանող ասեկոսներ տարածելով) լինել:

Միևնույն ժամանակ, շատ հեղինակներ տարբերակում են ագրեսիայի, որպես վարքի մենահատուկ ձևի, և ագրեսիվության, որպես անձի հոգեկան հատկության հասկացությունները: Ագրեսիան մեկնաբանվում է որպես գործընթաց, որն ունի մենահատուկ գործառույթ և կազմավորվածություն, իսկ ագրեսիվությունը դիտարկվում է որպես որոշակի կառուցվածք, որը հանդիսանում է մարդու հոգեկան հատկությունների առավել բարդ կառուցվածքի բաղադ-

րիչ: Անհրաժեշտ է նշել ագրեսիայի և ագրեսիվության տարբերությունները: Նախ և առաջ, անհարաժեշտ է հասկանալ, որ միշտ չէ, որ ագրեսիվ գործողությունները պայմանավորված են անձնային ագրեսիվությամբ, և հետո միշտ չէ որ մարդու ագրեսիվությունը դրսևորվում է ագրեսիվ գործողություններով: Ինչպես ենթադրում է Ա. Բասը, ագրեսիվությունը դրսևորվում է ուրիշների վրա հարձակման հակվածությամբ, անուղղակի ագրեսիվ հակազդումներով, վերբալ ագրեսիայով, ինչպես նաև նեգատիվիզմով: Համաձայն Վ.Պ. Պոշիվալովի (1986), ագրեսիվությունը ագրեսիվ վարքի անհատական նախադրվածությունն է, ագրեսիվ գործողություն կատարելու պատրաստակամությունը (Պոշիվալով, 1986): Ըստ Ա. Ռեանի ագրեսիվությունը անձնային հատկություն է, որն արտահայտվում է ագրեսիայի պատրաստակամությամբ: Ըստ Ժարովայի (2001), կարծիքի ագրեսիվությունը արտացոլում է ներքին հոգեբանական պատրաստակամությունը ուժային գործողությունների օգնությամբ հասնել նպատակին (Ժարովա, 2001): Եվ նա ընդգծում է, որ ագրեսիվությունը հանդիսանում է ագրեսիայի յուրաքանչյուր ձևերի պարտադիր բաղադրիչը: Յու. Անտոնյանը և Վ. Գուլդանը համարում են, որ ագրեսիվությունը արտահայտվում է թշնամական վարքի սուբյեկտիվ միտումով, որն ուղղված է այլ մարդու կամ մարդկանց լիովին կամ մասնակի ընճվածությանը, նրանց սահմանափակմանը, նրանց կառավարմանը, նրանց վնաս կամ տառապանք պատճառելուն (Антонян, Гульдан, 1991): Ն.Դ. Լևիտովը (1990) նկարագրում էր ագրեսիվությունը որպես զայրույթի ստենիկ վերապրում ինքնավերահսկողության կորստով:

Որպես ագրեսիայի հոմանիշներ օգտագործվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «դեստրուկտիվություն», «համառություն», «հարձակում», «բռնություն», «քայքայում», «դաժանություն»: «Ագրեսիվություն» եզրույթով նշանակում են իրավիճակային կամ անձնային հակվածությունը ջախջախիչ վարքին:

Ագրեսիվությանը շատ մոտ է կանգնած *թշնամանքը*: Թշնամանքը առօրյա խոսակցականի մեջ չունի իր հստակ նշանակությունը: Լ. Բերկովիցը (2001) գտնում է, որ թշնամանքը կարելի է սահմանել որպես այլ մարդու կամ մարդկանց նկատմամբ բացասական դիրքորոշում, որը արտահայտվում է իր օբյեկտի անբարենպաստ գնահատականով, և նշում է, որ թշնամական անհատը այնպիսի

մարդ է, որը սովորաբար մեծ պատրաստակամություն է դրսևորում բառացի կամ որևէ այլ ձևով արտահայտել այլ մարդկանց իր բացասական գնահատականները, դրանով իսկ ցուցադրելով անբարյացակամությունը նրանց նկատմամբ (Берковиц, 2001)։

Ագրեսիվության և թշնամանքի տարբերությունը ըստ գիտնականների մեծամասնության, կայանում է նրանում, որ ագրեսիվությունը դրսևորվում է վարքային գործողություններում, իսկ թշնամանքը՝ վերաբերմունքի և դիրքորոշումների մեջ։ Թշնամական զգացմունքները բարձրացնում են ագրեսիայի հավանականությունը, բայց պարտադիր չէ որ բերեն ագրեսիային։

Ն. Լևիտովը (1972) գտնում է, “թշնամանքը և ագրեսիվությունը համակցվում են, բայց ոչ միշտ։ Մարդիկ կարող են գտնվել թշնամական հարաբերություններում, բայց ագրեսիա չեն ցուցաբերում, քանի որ գիտեն դրա բացասական հետևանքների մասին, և հակառակը, մարդիկ կարող են ցուցաբերել ագրեսիվություն, առանց որևէ թշնամական զգացմունքների” (Левитов, 1972)։

Զայրույթը նույնպես շատ հաճախ է օգտագործվում ագրեսիայի հետ կապված։ Եթե ագրեսիան ուղղված է որոշակի նպատակին հասնելուն՝ այլ մարդու վնաս հասցնել, ապա զայրույթը, ի հակառակ դրան, որոշակի հուզական վիճակ է։ Զայրույթը պարտադիր չի բերում ագրեսիվ վարքի ցուցաբերմանը, չնայած որ հանդիսանում է ագրեսիայի հուզական բաղադրիչը (Изард, 2000; Левитов, 1972)։

Մի շարք աշխատանքներում ագրեսիան և *դաժանությունը* դիտարկվում են որպես մեկ շարքի երևույթներ։ Սակայն Յու. Անտոնյանը և Վ. Գուլդանը (1991), Օ. Միխայլովը (2000) և այլոք դաժանությունը առանձնացնում են մի առանձնահատուկ կատեգորիայի մեջ, որը բնութագրվում է յուրահատուկ երանգով։ Դաժանությունը որպես անձնային հատկություն դրսևորվում է յուրահատուկ տառապանքներ և տանջանքներ պատճառելու ձգտման մեջ։ Նշվում է, որ ագրեսիվ մարդը միշտ չի կարող դաժան լինել, բայց դաժան մարդը միշտ ագրեսիվ է լինում (Михайлова, 2000; Антонян, Гульдан, 1991)։

Հոգեբանության մեջ հատուկ տեղ է զբաղեցնում “*ագրեսիվ վարք*” հասկացությունը, որը դիտարկվում է որպես մարդու գործողությունների սպեցիֆիկ ձև, որը բնութագրվում է ուժի առավելության ցուցադրմամբ, կամ ուժի կիրառմամբ այլ մարդու կամ մարդ-

կային խմբերի նկատմամբ, որոնց սուբյեկտը ձգտում է ցավ պատճառել:

Ագրեսիվ վարքը Մ. Կոսևսկու կարծիքով, տարբերվում է էքսպրեսիվ հակազդումներից, որը կայանում է հուզական լարվածության չուղղորդված լիցքաթափմամբ:

Ագրեսիվ վարքը կարող է իրականանալ երկու ձևով՝ հետ-երու-ագրեսիա (վեճ, ծեծկռտուք, գողություն, բռնաբարություն, սպանություն և այլն) և աուտագրեսիա (թմրամոլություն, սուիցիդ, ինքնավնաս գործողություններ և այլն): Այսպիսով կարելի է ասել, որ ագրեսիվ վարքը կոնկրետ վերբալ և ֆիզիկական գործողություններ են: Ս.Լ. Սոլովյովան (1995) առանձնացնում է չորս պայման, որոնց առկայության ժամանակ կարելի է խոսել ագրեսիվ վարքի մասին՝

- սոցիալական փոխհարաբերությունների կոնտեքստում, այսինքն երկու կամ ավելի մարդկանց շփման իրավիճակում;
- ագրեսիվ գործողությունների նպատակի կամ արդյունքի առկայության դեպքում;
- ուժի առավելության ցուցադրման կամ մարդու, մարդկանց խմբի նկատմամբ ուժի կիրառման դեպքում;
- երբ գործողությունների նպատակը կամ արդյունքը հանդիսանում է վնասի պատճառում:

Այսպիսով, ագրեսիվ վարքի առավել տարածված **նպատակներն են** հանդիսանում՝

- Զոհին վնաս պատճառելը, նրա տառապանքները;
- Անցկացրած տառապանքի համար վրեժխնդրությունը;
- Վնաս հասցնելը;
- Գերակշռումը, այլ մարդու վրա իշխանությունը;
- Նյութական բարիքների ստացումը, օրինակ, փող;
- Աֆեկտիվ լիցքաթափում, ներքին կոնֆլիկտի լուծում;
- Ինքնահաստատում /ինքնագնահատականի բարձրացում, ինքնահարգանքի պահպանում/;
- Իրական կամ երևակայական սպառնալիքից, տառապանքից պաշտպանություն;
- Ինքնավարության և ազատության պաշտպանում;
- Հեղինակության գրավում հասակակիցների խմբում;

- Պահանջմունքները բավարարելու ճանապարհին խոչընդոտների վերացում;
- Ուշադրության գրավում և այլն:
- Արտահայտված ձգտում դեպի մարդկանց գերիշխումը և նրանց օգտագործումը իր նպատակներով;
- Այլ մարդկանց ահաբեկություն՝ բառացիորեն, ժեստերով, հայացքով;
- Հաճախակի դժգոհություն, զայրույթ;
- Հաճախակի սուտ կամ խոստումների չկատարում;
- Հաճախակի վեճեր ծնողների հետ;
- Հոգեբանական նպատակը որոշվում է վարքային վերլուծության ընթացքում, որը ներառում է հետեյալ պահերը՝
- Իրավիճակը, երբ առաջին անգամ տեղի է ունեցել ագրեսիվ վարքը;
- Իրավիճակները, երբ ներկայումս տեղի է ունենում ագրեսիվ վարքը;
- Մարդկանց, ում ներկայությամբ արտահայտվում է ագրեսիվ վարքը;
- Սովորաբար ինչն է նախորդում ագրեսիվ վարքին, որոնք են խթանող մեխանիզմները;
- Հետագա իրադարձությունները /վիճակ, մտքեր, գործողություններ/;
- Շրջապատողների հակազդումը;
- Ինչն է բացառում սովյալ վարքը /երբ և ինչի շնորհիվ այն տեղի չի ունենում/;
- Անձի վերաբերմունքը ագրեսիվ վարքին:

Ագրեսիայի կառուցվածքը, բաղադրիչները և փեսակները:

Ըստ կառուցվածքային բնութագրերի ագրեսիվությունը լինում է՝
Ֆիզիկական /ծեծ, վիրավորանք, բռնաբարություն/ և վերբալ կամ խոսքային /բամբասանքի տարածում վիրավորանք, հրաժարում շփվելուց /:

Ուղղակի /որն ուղղված է անմիջապես օբյեկտին/ և անուղղակի /այլ օբյեկտների վրա տեղաշարժված/:

Թշնամական /այլ մարդուն վնաս կամ ցավ պատճառելու ակնկալիքով/ և գործիքային – նպատակին հասնելու համար օգտագործվող ագրեսիվ գործողություններ: Այս դեպքում զոհի տառապանքները սուբյեկտի ուշադրության կենտրոնում չեն գտնվում:

Ռեակտիվ և պրոակտիվ: Ռեակտիվ ագրեսիոն հանդիսանում է թվացող կամ իրական գրոհի, սպառնալիքի պատասխան: Պրոակտիվ ագրեսիան /վախեցնում, ստիպում/ ձեռնարկվում է սադրիչի կողմից սեփական պահանջների բավարարման համար: Սովորաբար պրոակտիվ ագրեսիան ուղղված է առավել թույլ, անպաշտպան էակի: Պրոակտիվ ագրեսիան կարող է լինել ինչպես թշնամական, օրինակ պատահական հանդիպած մարդուն իր անհաջողությունների համար վրեժխնդիր են լինում, այնպես էլ գործիքային, օրինակ հետապնդում խմբում իշխանություն հաստատելու համար, կամ վարձու սպանություն:

Չարորակ և բարորակ ագրեսիա: Այսպես օրինակ, բարորակ ագրեսիան նպաստում է կյանքի պահպանմանը և հանդիսանում է հարամարողական ագրեսիա: օրինակ ռազմական ծառայողները, ոստիկանության աշխատակիցները ռազմական գործողությունների ժամանակ շատ դեպքերում դիմում են ագրեսիվ գործողությունների, որոնք հետապնդում են մասնագիտական և քաղաքացիական նպատակներ: Բարորակ ագրեսիայի թվին է պատկանում նաև ինքնապաշտպանությունը, ինչպես նաև պսևդոագրեսիան, որի ժամանակ վնաս հասցվում է ոչ դիտավորյալ: Պսևդոագրեսիան իր մեջ ներառում է դժբախտ պատահարներ, խաղային ագրեսիան /սուսերամարտ, բռնցքամարտ/, ինչպես նաև ագրեսիան, որպես սոցիալ ընդունելի ինքնահաստատում կոնկուրենցիայի պայմաններում: Վարքի այս ձևը արդի գրականության մեջ ընդունված է կոչել «համառ, հաստատակամ և նպատակասլաց», բայց ոչ ագրեսիվ: Այս թեմինների տարանջատումը թույլ է տալիս սխալ չգնահատել վստահ վարքը որպես ագրեսիվ: Սակայն երբեմն, հնարավոր չի լինում գտնել սահմանը ագրեսիայի և համառության միջև: Ըստ Ֆրոմի, ագրեսիոն որպես էվոլյուցիայի ընթացքում ամրապնդված վարք, չի կարող չլինել ադապտիվ, ուստի և պետք է ըստ նրա պայքարել միայն սոցիալ վտանգավոր, հարմարողականությանը խոչընդոտող ձևերի հետ: Ընդունելի ագրեսիվության անբավարարությունը բերում է ինքնահաստատման և ինքնաիրականացման սահմանա-

փակմանը, կույր ենթարկվելուն և ոչ պետքական գոհունակությանը: Բարորակ ագրեսիան անհրաժեշտ է հնացած կերպարների, նորմերի քայքայման համար, ինովացիաների անցկացման համար: Յուրաքանչյուր ստեղծագործական աշխատանք ենթադրում է արդեն կայացած կարգուկանոնի հերքումը և նոր կանոնների, տեսությունների և օրենքների կայացումը:

Չարորակ ագրեսիան է. Ֆրոմը որոշում է որպես դեստրուկտիվություն, որը կապված չէ կյանքի պահպանման հետ: Նա նկարագրում է դեստրուկտիվությունը առավել լայն սոցիալական և մշակութային համատեքստում, քան մենագրությունների մեծամասնության մեջ է դա նկարագրվում: Բացի վրեժխնդրությունից, Ֆրոմը առանձնացնում է էկստատիկ դեստրուկտիվություն, որը ծնվում է մի քանի կրոնական կուլտերով, իդեոլոգիական շարժումներով, որոնք ապաարգելակում են ճնշված հակումները: Վերջինս բերում է քայքայմանա իդեալին ծառայելուն և քրոնիկական ատելությանը:

Ագրեսիան կարող է լինել նաև *կամայական և ոչ կամայական*: Անընդունելի ոչ կամայական ագրեսիվ վարքը իրեն հերթին կարող է ինչպես *պատրաստական*, այնպես էլ *թույլ գիտակցական* լինել: Այսպես, օրինակ ֆիզիոլոգիական աֆեկտի ժամանակ գիտակցությունը նեղանում է, կտրուկ իջնում է ինքնավերահսկողությունը, և անձը կարող է կատարել վտանգավոր ագրեսիվ գործողություններ, չտալով իրեն պատասխան կատարվածի համար:

Ըստ արտահայտման ձևի ագրեսիան լինում է *բացահայտ /արտաքննապես դիտվող/ և թաքնված*: Ագրեսիվ վարքի առավել տարածված, բացահայտ արտահտումներից են համարվում՝ բամբասանքը, ձայնի բարձրացումը, աֆեկտացիան /բացասական հույզերի բուռն արտահայտումը/, ստիպումը, բացասական գնահատումը, վիրավորանքները, սպառնալիքները, ֆիզիկական ուժի օգտագործումը /կծել, ճանկոել, հարվածել/, զենքի օգտագործումը: Թաքնված ագրեսիայի արտահայտումներն են հանդիսանում շփումից խուսափումը, անգործությունը ուրիշին վնաս տալու նկատառումով, սեփական անձին վնաս տալու ցանկությունը ընդհուպ մինչև ինքնասպանությունը: Ըստ ամերիկացի հոգեբանների Դ. Բեյջի և Գ. Գոլդբերգի (1974) կարծիքի այն անհատները, որոնք դաստիարակվել են շատ խիստ ռեպրեսիվ, ավտորիտար ընտանիքներում, որտեղ նրանց թույլ չէին

տալիս բացահայտ արտահայտել իրենց գրգռվածությունը, ավելի շատ են հակված ցուցաբերել իրենց ագրեսիան պասիվ ձևով: Պասիվ ագրեսիան հանդիսանում է թշնամանքի անուղղակի արտահայտումը: Գոյություն ունի պասիվ ագրեսիվության մի քանի տարատեսակ, որոնցից կբերենք մի քանի օրինակ (Бэрон., Ричардсон, 1997):

Մոռացություն՝ պասիվ ագրեսիվության տարատեսակ է, որն արտահայտվում է երկու ձևերով: Առավել ցայտուն ձևն այն է, երբ մարդը, մոռանում է կատարել ուրիշի համար կարևոր որևէ բան: Քրոնիկական մոռացող մարդը չի կարող ուղղակի ասել “ոչ, չեմ կարող կամ չեմ ցանկանում այն անել”: Բացի այդ այդպիսի մարդիկ ընտրողական են վերաբերվում այն առարկաներին, որոնք նրանք մոռանում են: Այդպիսի մարդիկ երբեք չեն մոռանա այն, ինչ իրենց համար շատ կարևոր է, այլ մոռանում են այն, ինչ կարևոր է ուրիշի համար, ով իրենցից կախման մեջ է գտնվում:

Ի վերջո, քրոնիկ մոռացող մարդը անուղղակի ճանապարհով հասնում է նրան, ինչին նա ի վիճակի չէ բացահայտ պնդել և հասնել, այսինքն նրա հետ սերտ կապված մարդիկ դադարում են նրա վրա հույս դնել:

Մյուս ձևը ինքնաքայքայիչ մոռացությունն է, կամ պասիվ ագրեսիան, որն ուղղված է իր վրա: Մարդը մոռանում է իր համար կարևոր բաները: Երկու դեպքում էլ մարդը ունակ չէ բացահայտ և ուղղակի ինքնահաստատման:

Թյուրիմացություն: Մարդը արտահայտում է իր ագրեսիան այս պասիվ ձևով, դիմակավորելով այն մեծ անկեղծությամբ: Թյուրիմացության մեղավորը խոսում է ընդ որում շատ անմեղ և միամիտ տեսքով “Ես կարծում էի, որ դուք ցանկանում էիք.....”, այնժամանակ, երբ իր զոհը հանդիպում է խոչընդոտող իրավիճակներին:

Քաշքշուկ: Քաշքշուկներ հարդարող մարդը միշտ խոստանում է “Մի անհանգստացեք, շուտով ամեն ինչ պատրաստ կլինի”: Նա իրականացնում է իր պասիվ ագրեսիան, մարդկանց զգելով հուսահատության մեջ իր մշտական ձգձգումներով և հրաժարվելով որոշակի ամսաթվով: Թաքնված ագրեսիայի այս մեթոդը օգտագործող մարդիկ սովորաբար ընտրողական են իրենց վարքերը որոշակի մարդկանց և իրավիճակների նկատմամբ:

Եթե նրանք իրոք տարված են իրենց աշխատանքով, ապա ամեն ինչ արվում է ըստ ժամանակացույցի:

Ուշացում: Այն անհատները, որոնք մշտապես ուշանում են ժողովների, ժամադրությունների, գործնական հանդիպումների, անուղղակիորեն արտահայտում են դրանով իրենց թշնամանքը այն մարդկանց հանդեպ, ովքեր սպասում են իրենց: Նրանք գիտաքցաբար կամ անգիտակցորեն դրանով արտահայտում են իրենց առավելությունը: Սակայն նրանք շատ ճիշտ և համապատասխան ներողություններ են խնդրու, որոնց էությունը կայանում է զոհին հարձակման վիճակից տեղափոխել պաշտպանման վիճակին: Ուշացողին սպասելը առաջացնում է զայրույթի և ստորացման զգացումը, որն էլ հանդիսանում է պասիվ ագրեսիայի, տվյալ դեպքում ուշացման, նշանակետը:

Պասիվ ագրեսորի հետ շփման լավագույն միջոցը հանդիսանում է թաքնված ագրեսիայի բացահայտումը, նրա թաքնված վիրավորանքի բացահայտումը: Որպիսի խուսաթել թյուրիմացությունից, պետք է ստիպել պասիվ ագրեսորին կրկնել Ձեր ցուցումները: Գործ ունենալով քաջքշուկ սիրողների կամ ուշացողների հետ, պետք է հաստատել ստույգ ժամկետը, և նշանակել պատիժ յուրաքանչյուր ուշացման համար: Եվ բացի այդ, ինչը շատ ավելի կարևոր է, հետևել, որպիսի այդ պատիժը իրականանա:

Գոյություն ունի նաև *պաթոլոգիական ագրեսիա*, որը կարող է հանդիսանալ փսիխոտիկ վիճակի հետևանք և պահանջում է բժշկական միջամտություն: Իռացիոնալ համոզմունքները, ներքին ձայները, պարանոիդալ կասկածամտությունը, աստվածային ուղերձների վերաբերյալ գաղափարները, վեհության մոլուցք՝ այս ամենը կարող է հանդիսանալ որպես ագրեսիայի պաթոլոգիական ազդանշան: Այն կարող է հանդես գալ որպես ինքնապաշտպանման սուբյեկտիվորեն ընկալվող միջոց, մեսիանության գաղափարների մարմնավորում, հերոսության արտահայտումներ և այլն: Սակայն հոգեկան շեղումների առկայությունը դեռ չի հանդիսանում դեստրուկտիվ գործողությունների կատարման կանխատեսում:

Յու. Բ. Մոժգինսկին առանձնացնում է պաթոլոգիական ագրեսիայի երկու տեսակ՝ փսիխոտիկ և վերափոխված կամ տրանսֆորմացված: Փսիխոտիկ ագրեսիան կատարվում է

հայլուցինացիաների և զառանցանքների ազդեցության տակ և բնութագրվում է դեստրուկտիվ արարքների անմտությամբ: Իսկ տրանսֆորմացված ագրեսիայի ժամանակ դաժան վարքը ի սկզբանե ադեկվատ իրավիճակից փոխվում է ագրեսիվ պաթոլոգիական գործողությունների սադիստական բռնությունների հատկանիշներով:

Լինում է նաև *էգո-սինսրոն* /անձի կողմից ընդունվող/ և *էգո-դիսսրոն* / “Ես”-ի համար օտար, անձի կողմից դատապարտվող/:

Ագրեսիվ վարքի հետ աշխատանքի համար առավել կարևոր է հանդիսանում ագրեսիվ վարքի բոլոր ձևերի տարբերակումը երկու խմբերի՝

- Ագրեսիվ վարքի ոչ սոցիալիզացված ձևեր, որոնք նպատակ չեն հետապնդում այլ մարդուն վնաս հասցնել և չեն կրում թշնամական բնույթ;
- Ագրեսիվ վարքի սոցիալիզացված ձևեր՝ ուղեկցվում են թշնամանքով, և նպատակ են հետապնդում վնաս տալ ուրիշին:

Ագրեսիայի գործառույթները:

Ագրեսիան որպես վարք

Ներկայի սահմանումը ենթադրում է, որ ագրեսիան պետք է դիտարկել որպես վարքի մոդել, այլ ոչ թե որպես հույզ, դրդապատճառ կամ դիրքորոշում: Այս կարևոր պնդումը մեծ խառնաշփոթ է ստեղծել հետազոտողների մոտ: Ագրեսիա թերմինը հաճախ զուգորդվում է այնպիսի բացասական հույզերի հետ, ինչպիսիք են զայրույթը; այնպիսի դրդապատճառների հետ, ինչպիսիք են վիրավորելու կամ վնասելու միտումը; ինչպես նաև այնպիսի բացասական դիրքորոշումների հետ, ինչպիսիք են ռասսայական կամ էթնիկական նախապաշարմունքները: Չնայած նրան, որ այս բոլոր գործոնները, անկասկած, կարևոր դեր են խաղում վարքի մեջ, որի արդյունքն է դառնում վնասի հասցնումը, սակայն դրանց առկայությունը անհրաժեշտ պայման չի հանդիսանում դրա դրսևորման համար: Այսինքն, զայրույթը պարտադիր պայման չի հարձակման համար, ագրեսիա կարող է զարգանալ ինչպես լրիվ սառնարյուն վիճակում, այնպես էլ բարձր հուզական գրգռվածության վիճակում: Ինչպես նաև, պարտադիր

չէ, որպիսի ագրեսորները ատեն կամ նույնիսկ չհամակրեն նրանց, ում ուղված են իրենց ագրեսիվ գործողությունները: Շատերը վնաս են պատճառում այն մարդկանց, ում վերաբերվում են հաճախ ավելի դրական, քան բացասական:

Ագրեսիան որպես մտադրություն:

Ագրեսիայի սահմանումը ենթադրում է գործողություններ, որոնց միջոցով ագրեսորը դիտավորյալ վնաս է հասցնում իր զոհին: Սակայն, վնասի դիտավորյալ հասցնելու չափանիշ ներմուծումը բավական մեծ դժվարություններ է առաջացնում: Նախ և առաջ, հարց է առաջանում, թե մենք ինչ ի նկատի ունենք ասելով, որ մեկը մյուսին դիտավորյալ վնաս է հասցրել: Երկրորդ հերթին, ինչպես պնդում են շատ հեղինակներ, մտադրությունները՝ թաքնված, ուղղակի դիտմանը ոչ հասանելի մտադրություններ են (Buss, 1971; Bandura, 1983): Դրանց մասին կարելի է դատել ըստ այն պայմաններին, որոնք նախորդել են կամ հետեւել են ագրեսիայի քննարկվող գործողություններին: Նման եզրակացություններ կարող են անել ինչպես ագրեսիվ փոխներգործության մասնակիցները, այնպես էլ կողմնակի դիտորդները, որոնք միևնույն է ազդում են տվյալ մտադրության բացատրության վրա (Tedeschi, Smith&Brown, 1974):

Այսպիսով, մտադրության կատեգորիայի ներմուծումը ագրեսիայի սահմանման մեջ հակասություն և անորոշություն է մտցնում այն բանի հասկացման մեջ թե որ գործողությունը կարելի է համարել ագրեսիվ ակտ համարել:

Սակայն երբեմն վնաս պատճառելու մտադրությունը շատ հեշտ է որոշվում՝ ագրեսորները իրենք են իրենց զոհին վնասելու ցանկության մեջ խոստովանում և շատ հաճախ զղջում են, որ իրենց հարձակումները անդյունավետ չեն եղել: Եվ սոցիալական կոնտեքստը, որտեղ տեղի է ունենում ագրեսիվ վարքը, հաճախ հստակ վկայում է նման մտադրությունների առկայության մասին: Սակայն հանդիպում են նաև իրավիճակներ, երբ ագրեսիվ մտադրության առկայությունը կամ բացակայությունը դժվար է լինում որոշել:

Չնայած այս բոլոր դժվարություններին, կան մի քանի լուրջ պատճառներ, որոնք թույլ են տալիս որպիսի այս չափանիշը մնա

ագրեսիայի սահմանման մեջ: Այլակերպ, բոլոր վիրաբույժների, մարզիկների, ատամնաբույժների գործողությունները կարելի էր դիտարկել որպես ագրեսիա: Եվ միևնույն ժամանակ, չստացված ագրեսիվ գործողությունները չդիտարկել որպես ագրեսիվ վարք: Ուստի, հաշվի առնելով վերընշվածը, շատ կարևոր է ագրեսիան դիտարկել ոչ միայն որպես ուրիշին վնաս պատճառող վարք, այլ նաև որպես ցանկացած գործողություն, որոնք նպատակ ունեն հասնել նման բացասական հետևանքների:

Դասախոսություն N2

Ագրեսիան որպես բնազդային վարք՝ հոգեվերլուծական մոդելում:

Ֆրոյդի տեսանկյունները ագրեսիայի վերաբերյալ նշանակալի փոփոխությունների են ենթարկվել նրա գիտական գործունեության ընթացքում: Կարելի է առանձնացնել նրա տեսանկյունների զարգացման երեք փուլ: Իր վաղ աշխատանքներում Ֆրոյդը ենթադրում էր, որ մարդու վարքի մեջ հիմնական դեր է խաղում *Լիբիդոն* /սեքսուալ էներգիան/: Ագրեսիվ ազդակները դրսևորվում են միայն հոգեսեքսուալ զարգացման փուլերում: Առաջին անգամ այդ ազդակները ի հայտ են գալիս երեխայի մոտ նրա ուշ օտալային փուլում և հասնում են իրենց զարգացման գագաթնակետին անալային փուլում: Սակայն ավելի ուշ, կլինիկական տվյալների ազդեցության տակ Ֆրոյդը հրաժարվեց տվյալ հայեցակարգից և առանձնացրեց պաշտպանողական բնազդի՝ *էգո*-ի, դերը, որի գլխավոր բաղադրամասն է հանդիսանում ագրեսիան: Այդ շրջանում Ֆրոյդը ակտիվ պնդում էր ագրեսիվ մղումների ռեակտիվ բնույթի մասին:

Ֆրոյդի հետագա ուսումնասիրությունները հանգեցրեցին նրան այն եզրակացությանը, որ մարդկային վարքը սկիզբ է առնում ուղղակի կամ անուղղակի *էրոսից*՝ կյանքի բնազդից, որի էներգիան /հայտնի որպես *լիբիդո*/ ուղղված է կյանքի պահպանմանը, վերարտադրմանն ու ամրապնդմանը: Այս ընդհանուր համատեքստում ագրեսիան դիտարկվում է ուղղակի որպես լիբիդային իմպուլսների քայքայում, մեկուսացում: Ագրեսիան որպես

այդպիսին չէր մեկնաբանվում ոչ որպես կյանքի անբաժան, ոչ էլ հաստատուն և մշտական մաս:

Վերապրելով առաջին համաշխարհային պատերազմի դաժանության փորձը Ֆրոյդը (Freud, 1920) սեկավ ագրեսիայի առաջացման վերաբերյալ այլ համոզմանը: Նա առաջարկեց երկրորդ հիմնական բնագրի՝ *տանապուսի* առկայությունը, որը տանում է մահվան, և որի էներգիան ուղղված է կյանքի քայքայմանն ու ընդհատմանը: Երկու բնագրերն էլ նպատակն է հանդիսանում լարվածության ռեդուկցիան՝ կյանքի բնագրը ձգտում է ազատվել գլխավորապես սեքսուալ լարվածությունից, իսկ մահվան բնագրը՝ սովորական կյանքի լարվածությունից: Ֆրոյդը նշում էր, որ ինչքան ավելի ուժեղ է անձի մոտ մահվան բնագրը, այնքան առավել անհրաժեշտ է նրան ուղղել իր ագրեսիան դեպի դուրս, այլ օբյեկտներին և մարդկանց: Ենթադրելով, որ ագրեսիան հանդիսանում է այսպես կոչված “Ես-հակման” բաղադրամաս, իր տեսության մեջ նկարագրեց ինքնուրույն ագրեսիվ հակումը, որպես մահվան հակում: Ագրեսիան 2. Ֆրոյդի մեկնաբանման մեջ իր սկիզբը վերցնում է բնածին և կրողին ուղղված մահվան բնագրից:

Մահվան և կյանքի բնագրի պայքարի արդյունքում ագրեսիան կարող է փոխել իր ուղղությունը և պրոյեկցվել արտաքին օբյեկտների վրա: Սակայն դրան դիմակայում են մարդկային մշակույթի նորմերը, որոնք ուղղված են ագրեսիվ բնագրի գապմանը:

Նա պնդում էր նաև, որ ամբողջ մարդկային վարքը հանդիսանում է էրոսի և տանատոսի բարդ համագործակցության արդյունք և, որ նրանց միջև անընդհատ գոյություն ունի լարվածություն: Հաշվի առնելով այն, որ գոյություն ունի սուր կոնֆլիկտ էրոսի և տանատոսի մեջ, այլ մեխանիզմները /օրինակ, տեղաշարժը/ ծառայում են տանատոսի էներգիան “Ես”-ից դեպի դուրս ուղղելուն: Այսպիսով, տանատոսը անուղղակիորեն նպաստում է ագրեսիայի դուրս գալուն:

Իր աշխատանքներում 2. Ֆրոյդը նկարագրում է հասարակության փորձը ագրեսիան սահմանափակել “Գեր-Ես”-ի օգնությամբ: Ագրեսիայի ճնշումը հասարակության կողմից վատ ավարտ կունենա հենց անձի համար, քանի որ ելք չգտած ագրեսիան վերափոխվում է ինքնաքայքայման ձգտմանը: Ֆրոյդը պնդում էր,

որ այդ երկու բնագրները չի կարելի վերացնել ոչ մի սոցիալական ներգործություններով: Ֆրոյդի հայացքները տվյալ հարցի վերաբերյալ շատ վատատեսական են: Եվ եթե ագրեսիան ելք չգտնի, ապա այն կբերի անհատի քայքայմանը: Միակ լավատեսական պահը կայանում է նրանում, որ հույզերի արտաքին դրսևորումը, որը ուղեկցում է ագրեսիան, կարող է քայքայիչ էներգիայի լիցքաթափում առաջացնել, և դրանով իսկ, նվազեցնում է առավել վտանգավոր գործողությունների առաջացման հավանականությունը: Ֆրոյդի տեսության այս ասպեկտը (կատարսիսի դրույթը) հաճախ մեկնաբանվում էր հետևյալ կերպ՝ խափանումով չուղեկցվող էքսպրեսիվ գործողությունների իրականացումը, կարող է ծառայել արդյունավետ միջոց առավել վտանգավոր արարքների կանխման համար: Սակայն Ֆրոյդը իր աշխատություններում ավելի շատ դեմ է խոսում այս պնդումներին: Նա գտնում է, որ կատարսիսի գործողությունը կարճատև է և մինիմալ ըստ իր բնույթի, և չի կարողագրեսիվ էներգիայի լիցքաթափման պատճառ լինել:

Ագրեսիան որպես բնազդային վարք՝ Կ. Լորենցի տեսությունը (էթոլոգիական մոտեցում):

Լորենցը (Lorenz, 1966, 1964) Նոբելյան մրցանակակիր է, էթոլոգ, ագրեսիայի էվոլյուցիոն մոտեցման կողմնակից է:

Համաձայն Լորենցի, ագրեսիան սկիզբ է առնում նախ և առաջ գոյատևման համար պայքարի բնածին բնազդից, որը առկա է մարդկանց մոտ, ինչպես և այլ կենդանի էակների մոտ: Նա ենթադրում էր, որ այդ բնազդը զարգացել է երկարատև էվոլյուցիայի արդյունքում, որի օգտին վկայում են դրա երեք կարևոր ֆունկցիաները: Նախ և առաջ, պայքարը ցրում է տեսակի ներկայացուցիչներին լայն աշխարհագրական տարածության մեջ, և դրանով իսկ ապահովվում է առկա սննդային ռեսուրսների ուտիլիզացիան: Երկրորդ հերթին, ագրեսիան օգնում է լավացնել գենետիկական ֆոնդը այն բանի հաշվին, որ սերունդ կարողանում են թողնել միայն առավել ուժեղ և էներգիայով լի անհատները: Եվ վերջապես, ուժեղ կենդանիները ավելի լավ են պաշտպանվում և ապահովվում են իրենց սերունդի գոյատևումը:

Ի տարբերություն Ֆրոյդի, որը չունեւր միանշանակ կարծիք բնազդային ագրեսիվ էներգիայի կուտակման և լիցքաթափման վերաբերյալ, Լորենցը գտնում էր, որ ագրեսիվ էներգիան, որի

աղբյուրն է հանդիսանում պայքարի բնագրը, առաջանում է օրգանիզմում ինքնաբերաբար, անընդհատ, մշտական տեմպով, պարբերաբար կուտակվելով ժամանակի ընթացքում: Այսպիսով, ագրեսիվ գործողությունների իրականացումը հանդիսանում է կուտակված ագրեսիվ էներգիայի քանակի և ագրեսիայի լիցքաթափումը ապահովող առանձնահատուկ ազդակների առկայության և ուժի միասնական գործառույթը: Այլ կերպ ասած, ինչքան ավելի շատ է ագրեսիվ էներգիայի քանակը տվյալ պահին, այնքան ավելի քիչ ուժի ազդեցություն է հարկավոր, որպիսի ագրեսիվ էներգիան դուրս մղվի: Փաստորեն, եթե վերջին ագրեսիվ դրսևորումից անցել է բավական երկար ժամանակ, նման վարքը կարող է ծավալվել ինքնաբերաբար, արտաքին ազդակների բացարձակ բացակայության պայմաններում:

Ինչպես նշում էր Լորենցը (Evans, 1974), «որոշ կենդանիների մոտ ագրեսիվությունը համապատասխանում է բնագրային վարքի շեմքի նվազեցման բոլոր կանոններին: Կարելի է դիտել կենդանուն վտանգի սպասողական վիճակում; մարդը նույնպես կարող է իրեն նմանատիպ պահել»:

Լորենցի տեսության ամենահետաքրքիր հետևություններից մեկը կայանում է նրանում, որ դրա օգնությամբ կարելի է բացատրել այն փաստը, որ մարդկանց մոտ, ի տարբերություն այլ կենդանի էակներին, տարածված է ագրեսիան և բռնությունը իրենց տեսակի ներկայացուցիչների նկատմամբ: Համաձայն Լորենցի, բացի պայքարի բնածին բնագրից, բոլոր կենդանի էակները օժտված են իրենց ձգտումները ճնշելու հնարավորությամբ, որը տատանվում է իրենց զոհերին լուրջ վնաս հասցնելու ունակությունից: Այսպիսով, վտանգավոր գիշատիչները, օրինակ, առյուծները և վագրերը, որոնց բնությունը օժտել է բոլոր անհրաժեշտ միջոցներով այլ կենդանի էակներին սպանելու համար, ունեն իրենց տեսակի ներկայացուցիչների վրա հարձակմանը խոչընդոտող ուժեղ զսպող աղբյուր, այն ժամանակ, երբ մարդիկ օժտված են ավելի թույլ զսպող աղբյուրով:

Չնայած նրան, որ Լորենցը, ինչպես և Ֆրոյդը համարում էր ագրեսիան անխուսափելի, մեծ մասամբ հանդիսացող բնածին ուժերի հետևանք, նա ավելի լավատեսորեն էր մոտենում ագրեսիայի թուլացման և նմանատիպ վարքի վերահսկման հնարավորու-

թյանը: Նա ենթադրում էր, որ վնասի պատճառման հետ չկապված տարբեր գործողություններում մասնակցությունը, կարող է կանխել ագրեսիվ էներգիայի կուտակումը մինչև վտանգավոր մակարդակները և դրանով իսկ իջեցնել բռնության բռնկումների հավանականությունը: Կարելի է մի փոքր գերազանցելով, ասել որ մարդու մոտ բռնությունների բռնկումները կարելի է կանխել հազար այլ գործողությունների օգնությամբ (Zillmann, 1979): Լորենցը պնդում էր նաև, որ սերը և ընկերական հարաբերությունները կարող են անհամատեղելի լինեն բացահայտ ագրեսիայի արտահայտման հետ և կարող են պաշարել դրա դրսևորումը:

Ագրեսիայի առաջացման որսորդական վարկած:

Արդրիի տեսության համաձայն բնական ընտրության արդյունքում առաջացել է նոր տեսակ՝ «որսորդ»՝ «Մենք հարձակվում էինք, որ սովի չմատնվեինք: Մենք արահամարիում էինք վտանգները, այլ կերպ մենք կդադարեինք գոյություն ունենալ: Մենք հարմարվում էինք որսին կառուցվածքով և ֆիզիոլոգիայով» (Ardrey, 1970): Այս որսորդական «բնույթը» և կազմում է մարդկային ագրեսիվության հիմքը: Եվս երկու հնարներ, որոնց աղբյուրն է հանդիսանում մարդկային պահանջը «սպանել, որպիսի ապրել» (Ardrey, 1976), հավանական են դարձնում մասնակցությունը սոցիալական բռնություններում և պատերազմներում: Նախ և առաջ, որպիսի հաջող որսալ խմբերով, մարդիկ հնարել են շփման համար լեզու, որը պարունակում է այնպիսի հասկացություններ, ինչպիսին են «ընկեր» և «թշնամի», «մենք» և «նրանք», որոնք ծառայում են ուրիշների դեմ ագրեսիվ գործողությունների արդարացման համար: Երկրորդ հերթին, մեծ տարածությունների վրա վնաս պատճառող զենքի ի հայտ գալը, ինչպիսին են նետն ու աղեղըս փայտերի և քարերի փոխարեն, բերել է նրան, որ մարդիկ վերածվել են ավելի հաջող «զինված գիշատիչների»:

Այսպիսով, Արդրին պնդում էր, որ հենց որսորդական բնազդը, որպես բնական ընտրության արդյունք ուղեղի զարգացման և տարածությունների վրա վնասող զենքի հայտնվելու հետ միասին, ձևավորել է մարդուն, որպես էակ, որը ակտիվ հարձակվում է իր իսկ տեսակի ներկայացուցիչների վրա:

Մարդկային ագրեսիվության անտրոպոէկոլոգիական մոդելում:

Այս մոտեցման կողմնակիցներն են հանդիսանում մի շարք հայտնի գիտնականներ (Гильбурд О.А., 2000; Дерягина М.А., 1994; Корнетов А.Н. и соавт., 1990): Ագրեսիան և ագրեսիվությունը, չարը և բռնությունը, պատերազմներն ու կոտորածները և նմանատիպ բոլոր երևույթները մարդու բոլոր հետազոտողները անխոս դիտարկում են որպես բացասական, անոմալ, ոչ ցանկալի երևույթներ: Սակայն արդեն շատ հազարամյակներ այս երևույթները պահպանվում են Homo Sapiens տեսակի բնական ընտրության, և այսպես կոչված գենամշակութային էվոլյուցիայի բոլոր փուլերում (Самохвалов В. П. и соавт., 1995): Բնական է ենթադրել, որ ագրեսիվությունը և ագրեսիվ վարքը, որոնք ի հայտ են եկել էվոլյուցիայի որոշակի փուլերում, ունեն էվոլյուցիոն նշանակություն:

Ինչպես և վարքի ցանկացած ձև, ագրեսիվությունը դրսևորվում է միջավայրի հետ փոխհարաբերություններում: R. Foley- ի (1990) տեսանկյունից բանական մարդու համար յուրահատուկ առանձնահատկությունների ընտրողական ֆիքսացիան էվոլյուցիայի ընթացքում թույլ են տվել ստանալ ռեպրոդուկտիվ առավելություն այն մարդկանց նկատմամբ, ովքեր օժտված չեն նման գծերով: Հնարավոր է էվոլյուցիան պարզևատրել է մարդուն ագրեսիայի մեծ ուժով որպես կենսաբանորեն ամենա չհարմարված և թույլ տեսակի:

Հայտնի է, որ մարդու էվոլյուցիան տեղի է ունենում գենային, կառուցվածքային, ֆիզիոլոգիական և վարքային մուտացիաների օգնությամբ: Էթոլոգիայի հիմնական դրույթը վկայում է այն մասին, որ յուրաքանչյուր վարք կոնկրետ էկոլոգիական իրավիճակում կրում է հարմարողական կամ պաշտպանական բնույթ (Tinbergen N., 1951): Եվ հնարավոր է, որ լինելով ֆիզիկապես թույլ և զրկված պաշտպանության և հարձակման համար կենսաբանական մեխանիզմներից, ինչպիսիք են օրինակ, ուժեղ ոտքերը, ատամները, եղջյուրներ և այլն, մարդը ձեռք է բերել «վիտալ էներգիայի» ավելի մեծ ուժ: Երկրորդ հերթին էվոլյուցիայի ընթացքում մարդկային ագրեսիվությունը փոխել է իր ուղղությունը բնական միջավայրից սոցիալականը, ագրեսիան սկսել է ուղղվել մարդու վրա, մարդուն հակառակ: Կենսաբանաորեն ագրեսիվ միջավայրը մարդու մեջ

Ծնեց հարմարողական- պաշտպանական ագրեսիա բնական միջավայրի հանդեպ, որը հետագայում ամրապնդվելով գենա-մշակութային մեխանիզմներով, դարձել է մարդկային կենսագործունեության բոլոր ձևերի հիմքն ու էությունը: Այսինքն, կարելի է ասել որ ըստ Վ. Սամոխալովայի, ագրեսիվության ձևավորումը հանդիսանում է մարդու հոգեկան էվոլյուցիայի գործոններից մեկը, հավասար, օրինակ, ուղիղ քայլվածքի կամ խոսքի առաջացմանը (Самохвалов В.П., 1994): Մարդու «ոչ բանական բանականությունը» /ըստ Լորենցի «բանական, բայց անտրամաբանական մարդկային բնույթը»/ ծնել է հակասություններ մարդու բնական կենսաբանական միջավայրում, որը պայմանավորված է բանականության և մշակութային ավանդույթների վրա հիմնված սոցիալական վարքի և «ֆիլոգենետիկորեն ի հայտ եկող վարքի» օրինաչափությունների աններդաշնակությամբ: Վարքի այս երկու ֆունդամենտալ հիմնական ձևերի միջև եղած աններդաշնակությունը բերել է նրան, որ ագրեսիան մարդկային հասարակության մեջ սկսել է անիմաստ ձևեր ընդունել, և կորցնելով իր սկզբնական տեսակապահպանողական, պաշտպանական- հարմարողական իմաստը, սկսել է վերածվել գոյատևման սպառնալիքի:

Բնական է, որ այսպիսի դինամիկան տեղի ուներ ոչ միշտ և ոչ բոլոր ժողովրդների մոտ: Դա ապացուցվում է անտրոպոլոգիական, հնէաբանական և պատմական հետազոտությունների տվյալներով: Հայտնի են մշակույթներ, ընդհանուր առմամբ ժողովուրդներ, որոնք ավելի ագրեսիվ են /օրինակ սելջուկները, մոնղոլաթաթարները, կելտերը/, աուտոագրեսիվ են /ուգրո-ֆիները/, «հնագույն որսորդների հասարակությունը», ինչպես նաև «հողագործների հասարակությունը»:

Սոցիոկենսաբանական մոտեցում:

Ըստ ագրեսիայի առաջացման սոցիոկենսաբանական մոտեցման կողմնակիցների գեների ազդեցության երկարատևությունը պայմանավորված է հարմարողական վարքի ապահովմամբ, այսինքն գեները «հարմարված են» այն աստիճանի, որ իրենց ներդրումն են ունենում ռեպրոդուկցիայի հաջողության մեջ, ինչի շնորհիվ ապահովվում է դրանց պահպանումը հետագա սերունդների

մոտ (Barach, 1977): Այսպիսով, սոցիոկենսաբանները ապացուցում են, որ անհատները, կաջակցեն նման գեներ ունեցող անհատների գոյատևմանը, այսինքն հարազատներին, դրսևորելով ալտրոիզմ և ինքնազոհաբերություն, և կցուցաբերեն ագրեսիվ վարք ոչ հարազատների նկատմամբ, այսինքն նրանց նկատմամբ, ում մոտ ընդհանուր գեների առկայության հավանականությունը ավելի քիչ է: Նրանք կօգտվեն ցանկացած հնարավորությունով, որպիսի վնասեն նրանց և հնարավոր է, սահմանափակեն վերջինների հնարավորությունները սերունդ ունենալ սեփական կլանի անդամներից:

Համաձայն սոցիոկենսաբանական մոտեցման, ագրեսիվ փոխգործունեությունը մրցակիցների հետ իրենցից ներկայացնում է ռեպրոդուկցիայի բարձրացման ուղիներից մեկը սահմանափակ ռեսուրսներով միջավայրի՝ սննդի կամ ամուսնական զուգընկերոջ անբավարարության, պայմաններում: Ակնհայտ է, որ հաջող ռեպրոդուկցիան առավել հավանական է, եթե անհատը ունի սննդի և զուգընկերների բավական քանակ, որոնց հետ կարելի է սերունդ ունենալ: Սակայն ագրեսիան կբարձրացնի տվյալ անհատի գենետիկական պիտանելիությունը միայն այն դեպքում, եթե օգուտը դրանից կգերազանցի ծախսած ջանքերը: Որևէ մեկի գենետիկական պիտանելիությունը չի կարող բարձրանալ, եթե ագրեսիվ մցակցությունը բերի նրա տեսակի ոչնչացմանը:

Այսպիսով, սոցիոկենսաբանները համոզված են, որ ագրեսիվությունը միջոց է, որի օգնությամբ անհատները փորձում են ստանալ ռեսուրսների իրենց մասը, ինչը իր հերթին ապահովում է հաջողություն բնական ընտրության մեջ:

Ագրեսիան որպես դրդման դրսևորում՝ ուրիշներին վնաս պատճառելու դրդապատճառ:

Ագրեսիայի բնազդային ծագման տեսությունները շատ հոգեբանների կողմից չընդունվեց, հաշվի առնելով, այդ տեսությունների վատատեսությունը և անորոշությունը: Փաստորեն ագրեսիվ էներգիայի ինքնաբերաբար ծագման գաղափարը հերքված է այդ բնագավառի հետազոտողների մեծամասնության կողմից: Առավել տարածված է այն գաղափարը, որ ագրեսիան սկիզբ է առնում դրդումից, որը սահմանվում է որպես «ոչ բնազդային դրդապատճառային ուժ, որը հանդիսանում է էական

իրերից կամ պայմաններից օրգանիզմի գրկման արդյունք, և որը ավելանում է այդ տեսակի դեպրիվացիայի ուժեղացումից» (Zillmann, 1983a): Ագրեսիայի դեպքում դրդումները դիտարկվում են որպես ավերսիվ դրդման ածանցյալները և դրանց լարվածությունը թուլանում է ագրեսիվ գործողությունների շնորհիվ:

Այսօր ագրեսիայի հետազոտողների մեծամասնությունը (Ջ. Դոլլարդ, Ն. Միլլեր և այլ) կողմնակից է ագրեսիայի ծագման *ֆրուստրացիոն տեսությանը*: Ֆրուստրացիա թերմինը ունի տարբեր նշանակություն: Հոգեբանների մի մասը ֆրուստրացիա ասելով, հասկանում են արտաքին արգելք, որը խոչընդոտում է նպատակին հասնելուն, մյուսները այս եզրույթով նշում են ներքին հուզական հակազդումը, որը պայմանավորված է սահմանափակումներով նպատակին հասնելու ճանապարհին:

Հետաքրքրությունը Ֆրուստրացիայի նկատմամբ որպես բարդ խնդիրներից մեկը ի հայտ եկավ XX դարի 30-ական թվականներին: Այդ ընթացքում ի հայտ են գալիս ֆրուստրացիայի խնդրին նվիրված տեսական և կիրառական աշխատանքների մեծ քանակություն: Դրանցից առավել ազդեցիկ հանդիսացավ Ջ. Դոլլարդի և նրա համահեղինակների մենագրությունը “Ֆրուստրացիա և ագրեսիա”, որը հրատարակվել է 1939 թվ., որտեղ առաջ էր քաշվել ֆրուստրացիոն-ագրեսիվ վարկածը:

Համաձայն այդ վարկածի, ագրեսիան միշտ հանդիսանում է ֆրուստրացիայի հետևանք, և երկրորդը ֆրուստրացիան միշտ բերում է ագրեսիային, որն ուղղված է ֆրուստրացնող օբյեկտի վերացմանը:

Ուղղակի լիցքաթափման անհնարինության պայմաններում, տեղի է ունենում տեղափոխում մեկ այլ օբյեկտի: Ջ. Դոլլարդը և նրա գործընկերները ագրեսիան սահմանում էին որպես գործողություն, որի նպատակն է հանդիսանում վնասի հասցնելը որևէ անձի կամ օբյեկտի, իսկ ֆրուստրացիան՝ որպես պայման, որը առաջանում է, երբ նպատակաուղղված հակազդումները խանգարվում են: Այդ երկու դիտարկված ենթադրությունները կենտրոնական տեղ են զբաղեցնում Դոլլարդի տեսության մեջ: Բայց դրա հետ մեկ տեղ, Դոլլարդը և նրա համախոհները գտնում էին, որ ագրեսիայի դրդման նկատմամբ որոշիչ նշանակություն ունեն երեք գործոններ՝ 1. նպատակի ապագա արդյունքից սուբյեկտի կողմից ակնկալվող

բավարարվածության աստիճանը; 2. նպատակին հասնելու ճանապարհին խոչընդոտների ուժը; 3. հաջորդական ֆրուստրացիաների քանակը: Այսինքն, ինչքան ավելի ուժեղ է սուբյեկտը ակնկալում հաճույք և ինչքան ավելի ուժեղ է խոչընդոտը և ինչքան ավելի շատ պատասխան հակազդումներ են արգելափակվում, այնքան ավելի ուժեղ կլինի դրդումը դեպի ագրեսիվ վարքը: Հետագայում Դուլարդը և նրա համահեղինակները ենթադրեցին, որ մեկը մյուսին հաջորդող ֆրուստրացիաների ազդեցությունը կարող է համակցված լինել, և ավելի մեծ ուժի ագրեսիվ հակազդումների կրերի, քան նրանք առանձին վերցրած: Այսինքն, ասվածից հետևում է, որ ֆրուստրացնող իրադարձությունների ազդեցությունը պահպանվում է որոշակի ժամանակահատվածում:

Սակայն, ագրեսիայի և ֆրուստրացիայի վերաբերյալ միանշանակ հարաբերության մասին պնդումը առաջացրեց ֆրուստրացիոն –ագրեսիվ վարկածի քննադատում:

Բանդուրան (Bandura, 1973) ուշադրություն է դարձնում այն բանին, որ այս դրույթները չափազանց գրավիչ են մասամբ իրենց քաջության, իսկ մասամբ իրենց պարզության պատճառով: Ի վերջո, եթե այն ընդունել, ապա վարքի այնպիսի չափազանց բարդ ձևը, ինչպիսին է մարդկային ագրեսիան, մեծ մասամբ կբացատրվի միայն գրչի մեկ հպումով: Ուստի և սա էլ հանդիսանում է պատճառ, որ այս ձևակերպումները այսպիսի լայն ճանաչում են ստացել ինչպես գիտնականների, այնպես էլ հասարակության շրջանակներում: Սակայն այդ սահմանման մանրակրկիթ ուսումնասիրումը ցույց տվեց, որ այս երկու ձևակերպումներն էլ շատ աղոտ են:

Մի կողմից, պարզ է, որ ֆրուստրացված անհատները ոչ միշտ են դիմում վերբալ կամ ֆիզիկական հարձակումներին: Նրանք հաճախ ցուցաբերում են ֆրուստրացիայի նկատմամբ հակազդումների ողջ սպեկտրը՝ հնազանդությունից և հուսահատությունից մինչև իրենց ճանապարհին հայտնված խոչընդոտների հաղթահարման ակտիվ փորձեր: Շատ էմպիրիկ հետազոտությունների արդյունքները առավել ակնհայտ հաստատումներ են ներկայացրել այն դրույթի վերաբերյալ, որ ֆրուստրացիան միշտ չի բերում ագրեսիային (Berkowitz, 1969; Geen, O'Neal, 1976): Նրանք բոլորը ցույց են տալիս, որ չնայած նրան, որ ֆրուստրացիան երբեմն նպաստում է ագրեսիային, դա լինում է ոչ այնքան հաճախ: Հավանական է, որ ֆրուստրա-

ցիան առաջացնում է ագրեսիա նախ և առաջ այն մարդկանց մոտ, որոնք յուրացրել են ֆրուստրացիային կամ այլ ավերսիվ ազդակներին ագրեսիվ վարքով հակազդելու սովորույթը: Մյուս կողմից, այն մարդիկ, որոնց համար սովորական են այլ հակազդումներ, կարող են ֆրուստրացված ժամանակ ագրեսիվ վարք չցուցաբերել (Bandura, 1983):

Այսպիսով, ագրեսիվ վարքի վրա ֆրուստրացիայի ազդեցության ուսումնասիրություններից հետո հոգեբանների մեծ մասը կարծում են, որ այդ երկու գործոնների միջև կապը այդքան սերտ չէ, ինչքան որ ենթադրում էին Դոլարդը և նրա գործընկերները:

Այս հիմնավորումները հաշվի առնելով 1941 թվականին Ն. Միլլերը հրատարակեց մի փոքր ձևափոխված հայեցակարգ՝ ֆրուստրացիան առաջացնում է վարքի տարբեր մոդելներ, և ագրեսիան հանդիսանում է դրանցից մեկը, ինչպես նաև ներմուծեց “ագրեսիայի հրահրում” հասկացությունը:

Այսպիսով, այն պնդումը, որ ֆրուստրացիան միշտ բերում է ագրեսիային հերքվեց հենց իր հեղինակների կողմից:

Երկրորդ հերթին, այն ենթադրությունը, համաձայն որի ագրեսիան միշտ պայմանավորված է ֆրուստրացիայով, նույնպես այդքան հստակ չէ: Առավել մանրակրկիթ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ագրեսիան, բացի ֆրուստրացիայից հանդիսանում է շատ գործոնների հետևանք: Եվ իրոք, ագրեսիան կարող է առաջանալ ֆրուստրացնող պարագաների լրիվ բացակայության ժամանակ՝ օրինակ վարձու մարդասպանի դեպքում, թշնամուն վերացնող օդաչուն և այլն:

Երբ պարզ դարձավ, որ անհատները ոչ միշտ են ագրեսիայով հակազդում ֆրուստրացիային, Դոլարդը և նրա համահեղինակները այդ երևույթը բացատրում էին բացահայտ ագրեսիվ վարքը արգելակող գործոնների առկայությամբ: Նրանք եկան այն եզրակացության, որ նման վարքը չի դրսևորվում հենց այդ պահին, միայն պատժվելու վտանգից ելնելով: Սակայն, չնայած այն ենթադրությանը, որ պատժի վտանգը թողնում է արգելակող ազդեցություն, այն չէր դիտարկվում որպես ագրեսիայի արտահայտման արգելակող գործոն: Համաձայն Դոլարդի և նրա համահեղինակների, ագրեսիայի բոլոր գործողությունները՝ թաքնված, անուղղակի, գործիքային, կատարում են որոշակի

կատարսիսի դեր, դրանով իսկ նվազեցնելով հետագա ագրեսիվ գործողությունների խթանման մակարդակը:

Ինչպես արդեն նշվել էր, ֆրուստրացված անհատը, որը չի հարձակվում իր նպատակին խոչընդոտող անհատի վրա պատժվելու վախից, կարող է իր հարձակումները տեղափոխել այլ օբյեկտների: Թեեւ ամենահարմար կամ ցանկալի թիրախ ագրեսիայի լիցքաթափման համար ֆրուստրացված անհատի մոտ կլինի մեկը, ով արգելափակել է իր նպատակաուղղված վարքը, ագրեսիայի օբյեկտ կարող են ծառայել նաեւ այլ մարդիկ:

Ագրեսիայի փոխադրման երևույթը բացատրվեց Ն. Միլլերի կողմից 1948 թվականին (Miller, 1948): Նա առանձացրեց երեք գործոններ, որոնցով որոշվում է ագրեսորի կողմից զոհի ընտրությունը:

1. ագրեսիայի դրդման ուժը;
2. տվյալ վարքը արգելակող պայմանների ուժը;
3. պոտենցիալ զոհի և ֆրուստրացնող օբյեկտի ազդակային նմանությունը:

Հետագայում, հեղինակները հրաժարվեցին ագրեսիայի և ֆրուստրացիայի միանշանակ փոխապայմանավորվածությունից, նրանք ընդունեցին, որ ագրեսիան հաճախ, բայց ոչ պարտադիր է հանդիսանում ֆրուստրացիայի հետևանք: Նաև ենթադրում էին, որ ուսուցման եղանակով, հնարավոր է մշակել ֆրուստրացիայի ոչ ագրեսիվ պատասխաններ:

Ֆրուստրացիայի մեկ այլ հետաքրքիր տեսություն է մշակել Սաուլ Ռոզենցվեյզը: Նա հրատարակել է ֆրուստրացիայի հակազդումների տիպերի դասակարգումը, ինչպպես նաև նա տվել է ֆրուստրացիայի սահմանումը, համաձայն որի “ֆրուստրացիան տեղի է ունենում, երբ օրգանիզմը իր որևէ կենսական պահանջմունքի բավարարման ճանապարհին հանդիպում է քիչ թե շատ անհաղթահարելի խոչընդոտի կամ դժվարության”:

Ս. Ռոզենցվեյզը տարբերում է ֆրուստրացիայի երկու տիպ՝

- առաջնային ֆրուստրացիա կամ զրկանք՝ այն առաջանում է, եթե սուբյեկտը զրկված է իր պահանջմունքը բավարարելու հնարավորությունից;

- երկրորդային ֆրուստրացիան բնութագրվում է խոչընդոտների առկայությամբ իրենց պահանջմունքի բավարարման ճանապարհին:

Ս. Ռոզենցվեյգը տարբերում էր նաև երկու տիպի հակազդումներ՝ կայուն պահանջմունքի հակազդում և “Ես” –ի պաշտպանության հակազդում:

Ես-ի պաշտպանության հակազդումը նա բաժանել է երեք խմբերի՝

- Էքստրապունիտիվ հակազդումներ՝ ֆրուստրացիան վերագրվում է շրջապատողներին, ագրեսիան ուղղված է դեպի դուրս, այս հակազդմանը ուղեկցում են հույզերը՝ զայրույթ և գրգռվածություն; էքստրապունիտիվ հակազդումը ոչ միշտ է ծրագրավորված լինում
- Ինտրապունիտիվ հակազդումներ՝ ֆրուստրացիայի աղբյուրը անհատը վերագրում է ինքն իրեն, ագրեսիան ուղղված է քո վրա ինքնաքննադատման ձևով; այստեղ համապատասխան հույզերն են մեղքի զգացումը և զղջումը:
- Իմպունիտիվ հակազդումներ՝ բնութագրվում է ագրեսիայի բացակայությամբ, ֆրուստրացիայի հերքումով:
Այսպիսով, ագրեսիայի ֆրուստրացիոն տեսության մեջ դիտարկվում են ագրեսիայի և ագրեսիվության միջև պատճառահետևանքային կապերը և ագրեսիվ վարքի արտաքին պատճառների որոնում, իսկ ագրեսիվությունը՝ ձեռքբերովի անձնային որակ:

Ս. Ռոզենցվեյգի մշակած տեսական դրույթները ընկել են ֆրուստրացիոն նկարչական թեստի հիմքում:

ԹԵՄԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
Բաժին 1. ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

ԹԵՄԱ 1. Ագրեսիա հասկացությունը, տեսակները, բաղադրիչները: Ագրեսիվ վարքի առաջացման մեխանիզմները:

Առաջին թեման ներածական բնույթ է կրում, որում տրվում են հիմնական հասկացությունների բացատրությունները: Այն հնարավորություն է տալիս ուսանողներին պատկերացում կազմել ագրեսիվության որպես հոգեբանական ֆենոմենի և ագրեսիայի՝ որպես վարքի էության, հիմնական առանձնահատկությունների մասին: Ագրեսիվ վարքի հոգեբանությունը ներկայացվում է որպես հոգեբանության տեսակիրառական բաժիններից մեկը: Հանգամալիորեն նկարագրվում են ագրեսիվության տեսակները, ինչպես նաև կառուցվածքային ու գործառույթային բաղադրիչները: Մանրամասն ուսումնասիրվում են ագրեսիվ վարքի զարգացման վրա ազդող կենսաբանական, հոգեբանական և սոցիալական գործոնները, ինչպես նաև ագրեսիվ վարքին դրդող արտաքին նախադրյալները:

Թեմա 1.1. Ներածություն ագրեսիվ վարքի հոգեբանություն:
Ագրեսիվ վարքի հոգեբանության առարկան, նպատակը և խնդիրները:

Ագրեսիվ վարքի հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները: Ագրեսիա հասկացությունը, էությունը և նրա սոցիալիզացիաները: Ագրեսիա հասկացությունը, էությունը և նրա սոցիալիզացիաները: Ագրեսիա հասկացությունը, էությունը և նրա սոցիալիզացիաները: Ագրեսիա հասկացությունը, էությունը և նրա սոցիալիզացիաները: Ագրեսիա հասկացությունը, էությունը և նրա սոցիալիզացիաները:

Ինքնուրույն աշխատանք

1.1.1 . Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Берковиц Л. Агрессия. Причины, последствия и контроль. СПб.-М.,2001.
2. Бэрон Р., Ричардсон Д. Агрессия. СПб., Питер, 1997, 400с

3. Реан А.А. Агрессия и агрессивность личности. СПб., Психологический журнал, 1996, N 5, с.3-17.
4. Румянцева Т.Г. Понятие агрессивности в современной зарубежной психологии // Вопросы психологии, 1991, N 1, с.82-86.

1.1.2. Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Ագրեսիայի գիտական ուսումնասիրման պատմությունը:
2. Ագրեսիան ժամանակակից գիտության տեսանկյունից:

Թեմա 1.2. Ագրեսիայի կառուցվածքը, բաղադրիչները և տեսակները:

Ագրեսիայի կառուցվածքը, հուզական, կոգնիտիվ և վարքային բաղադրիչները: Ագրեսիայի տեսակները: Ֆիզիկական և վերբալ ագրեսիա: Ուղղակի և անուղղակի ագրեսիա: Բացահայտ և թաքնված ագրեսիա: Թշնամական և գործիքային ագրեսիա: Կոնստրուկտիվ և դեստրուկտիվ ագրեսիա: Պաթոլոգիական և ոչ պաթոլոգիական ագրեսիա:

Ինքնուրույն աշխատանք

1.2.1. Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Агрессия у детей и подростков. Учебное пособие. /Под ред. Н.М. Платоновой. СПб.: Речь, 2004, 336с
2. Басс А. Психология агрессии /Вопросы психологии, 1967, N3, с.60-67.с.27-28.
3. Ениколопов С.Н. Понятие агрессии в современной психологии // Прикладная психология №2, 2001, с. 60-72
4. Курбатова Т.Н. Структурный анализ агрессии //Б.Г.Ананьев и лен.школа в развитии современной психологии. СПб., 1995

1.2.2. Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Ագրեսիայի տեսակները ըստ Ա.Բասի.
2. Ագրեսիայի ձևերը ըստ Է.Ֆրոմի.
3. Ագրեսիվության տեսակները ըստ Մոժգինսկու:
4. Հույզերի դերը ագրեսիվության առաջացման գործընթացում:

Թեմա 2. Ագրեսիայի ուսումնասիրման հիմնական տեսական մոտեցումները:

Այս բաժնում նկարագրված են ագրեսիվ վարքի հետազոտման առկա ժամանակակից մոտեցումները: Հակասական տեսական ուղղությունները ագրեսիայի ուսումնասիրության մեջ՝ բնագի, դրդում, ուսուցում: Չնայած ագրեսիվ վարքի հիմնավորման հակասական տեսական մոտեցումների բազմազնությանը, դրանցից շատերը դասվում են 4 հիմնական կատեգորիաներից մեկին՝

1. բնածին մղումներին և հակումներին;
2. արտաքին ազդակներով ակտիվացվող պահանջմունքներին (ֆրոստրացիայի տեսությունները);
3. իմացական և հուզական գործընթացներին;
4. արդի սոցիալական պայմաններին:

Թեմա 2.1. Գենետիկական-էվոլյուցիոն մոտեցումը ագրեսիայի խնդրին:

Ագրեսիան որպես բնագրային վարք՝ 2. Ֆրոյդի տեսությունը (հոգեվերլուծական մոտեցում): Ագրեսիան որպես բնագրային վարք Կ. Լորենցի տեսությունը (էթոլոգիական մոտեցում): Ագրեսիան որպես բնագրային վարք՝ Արդրիի որսորդական վարկածը: Գիլբերտի անտրոպոէվոլյուցիոնական մոտեցում: Սոցիոկենսաբանական մոտեցում: Էվոլյուցիոն մոտեցումների քննադատումը:

Ինքնուրույն աշխատանք

2.1.1. Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Адлер А. Понять природу человека. – СПб., 2000. – 256с.
2. Бэрон Р., Ричардсон Д. Агрессия. СПб.: Питер. 2000. 351 с.
3. Лоренц К. Агрессия (так называемое "зло"): Пер. с нем. М.: Издательская группа "Прогресс", "Универс", 1994. 272 с.

2.1.2. Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Լորենցը ագրեսիայի մասին:ս
2. Արդրիի որսորդական վարկածը:
3. Ագրեսիայի բնագրային ծագումը ըստ Ֆրոյդի:

Թեմա 2.2. Բիհեվիորիստական մոտեցումը ագրեսիայի խնդրին

Ջ. Դոլլարդի և Ն. Միլլերի ագրեսիվության ֆրուստրացիոն տեսությունը: Ս. Ռոզենցվեյգի տեսությունը: Լ. Բերկովիցի «ֆրուստրացիա-ագրեսիա» տեսությունը: Դրոման տեսություն: Ագրեսիվ վարքի կոգնիտիվ մոդելները: Ա. Բանդուրայի սոցիալական ուսուցման տեսություն:

Ինքնուրույն աշխատանք

2.2.1. Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Бэрон Р., Ричардсон Д. Агрессия. СПб.: Питер. 2000. 351 с.
2. Хекхаузен Х. Агрессия.//Мотивация и деятельность. М.,1986,405 с.
3. Берковиц Л. Агрессия. Причины, последствия и контроль. СПб.- М., 2001.
4. Майерс Д. Социальная психология. СПб., Питер, 1997.

2.2.2. Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Ֆրուստրացիա և ագրեսիա:
2. Բերկովիցը ֆրուստրացիայի մասին:
3. Զիլմանի դրոման փոխանցման տեսությունը:
4. Ագրեսիվ վարքի կոգնիտիվ մոդելները:
5. Բռնության ուղղակի և անուղղակի ուսուցում:

Թեմա 2.3. Էթիկա-հումանիստական մոտեցումը ագրեսիայի խնդրին:

Ագրեսիան որպես չարիք: Ինքնաիրականացումը որպես ագրեսիային դիմադրություն: Ա. Ադլերի Է. Ֆրոմի, Կ. Ռոջերսի, Ա. Մասլոուի, Վ. Ֆրանկլի և Ա. Ռեանի հիմնական գազափարները: Ագրեսիան որպես անհատի ստիպված պատասխան գործողություն նրա ազատության սահմանափակմանը: Ագրեսիան որպես հոգեբանական պաշտպանության մեխանիզմի տարատեսակ:

Ինքնուրույն աշխատանք

2.3.1. Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Бэрон Р., Ричардсон Д. Агрессия. СПб.: Питер. 2000. 351 с.
2. Хьелл, Л., Зиглер, Д. Теории личности: основные положения, исследования и применение. СПб.: 2003. с.312.
3. Фромм Э. Анатомия человеческой деструктивности. М.: Республика. 1994. 447 с.
4. Реан А.А. Агрессия и агрессивность личности. СПб., Психологический журнал, 1996, N 5, с.3-17.

2.3.2. Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Ագրեսիա և անձի ագրեսիվություն ըստ Ռեանի:
2. Ագրեսիան Ա. Մալլոուի տեսանկյունից:
3. Է. Ֆրոմի ռադիկալ հումանիստական մոտեցումը ագրեսիայի խնդրին:

ԹԵՄԱ 3. Ագրեսիայի սիստեմատիկ ուսումնասիրման մեթոդները:

Այս բաժնում նկարագրված են այն մեթոդները և մոտեցումները, որոնց օգնությամբ հնարավոր է ուսումնասիրել մարդկային ագրեսիան և դրա դրսևորումները: Էքսպերիմենտալ և ոչ էքսպերիմենտալ մոտեցումները ագրեսիվ վարքի հետազոտություններում, դրանց առավելություններն ու թերությունները:

Թեմա 3.1 Ագրեսիվ վարքի ուսումնասիրումը հարցման մեթոդի օգնությամբ:

Արխիվային հետազոտություններ: Վերբալ տեղեկատվություն: Անկետաների առավելությունները ագրեսիվ վարքի ուսումնասիրման ժամանակ: Անձնային սանդղակների և պրոյեկտիվ մեթոդների կիրառումը ագրեսիվ վարքի ուսումնասիրման ժամանակ:

Ինքնուրույն աշխատանք

3.1.1. Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Ավանեսյան Հ. Մ. Փորձարարական հոգեբանություն: //Ուս. Ձեռնարկ: Եր.: Էդիթ Պրինտ, 2010թ., 288 էջ:

2. Ավանեսյան Հ.Մ., Պապոյան Վ.Լ., Գալստյան Ա.Ս, Բեջանյան Ա.Տ., Ղազարյան Գ.Հ., Հովակիմյան Գ.Ռ. Հոգեբանական և սոցիալական աշխատանքները ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում: //Մեթոդական ձեռնարկ: Եր.: «Առողջության և կրթության հայկական կենտրոն», 2009 թ., 151էջ:
3. Արզումանյան Ա.Ջ., Մկրտչյան Ա.Շ., Սարգսյան Վ.ժ. Կիրառ. հոգեբանության պրակտիկում, Երևան, 2002թ., 392 էջ:
4. Бэрон Р., Ричардсон Д. Агрессия. СПб.: Питер. 2000. 351 с.

3.1.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Ագրեսիայի արխիվային հետազոտության առանձնահատկությունները:
2. Հարցարանների և պրոյեկտիվ մեթոդների ունիվերսալությունները ագրեսիայի ուսումնասիրման ժամանակ:

Թեմա 3.2. Դիման մեթոդը ագրեսիվ վարքի ուսումնասիրման մեջ:

Դիման մեթոդի տեսակները՝ դաշտային, լաբորատոր և հրահրելով: Ավտոմոբիլային ազդանշանները ագրեսիայի ուսումնասիրման ժամանակ: Միջանձնային կոնֆրոնտացիաները ագրեսիվ վարքի ուսումնասիրման ժամանակ: Ագրեսիայի «խաղային» միջոցները: Բասի մեթոդը ագրեսիայի ուսումնասիրման մեջ: Բերկովիցի կոնցեպցիան՝ ագրեսիան բացասական գնահատականի ձևով: Թեյլորի կոնցեպցիան՝ փոխադարձ ագրեսիա:

Ինքնուրույն աշխատանք

3.2.1. Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Ավանեսյան Հ. Մ. Փորձարարական հոգեբանություն: //Ուս. Ձեռնարկ: Եր.: Էդիթ Պրինտ, 2010թ., 288 էջ:
2. Ավանեսյան Հ.Մ., Պապոյան Վ.Լ., Գալստյան Ա.Ս, Բեջանյան Ա.Տ., Ղազարյան Գ.Հ., Հովակիմյան Գ.Ռ. Հոգեբանական և սոցիալական աշխատանքները ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում: //Մեթոդական ձեռնարկ: Եր.: «Առողջության և կրթության հայկական կենտրոն», 2009 թ., 151էջ:
3. Бэрон Р., Ричардсон Д. Агрессия. СПб.: Питер. 2000. 351 с.

3.2.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Լաբորատոր դիտման առանձնահատկությունները ագրեսիվ վարքի ուսումնասիրման մեջ:
2. Դաշտային դիտման առանձնահատկությունները ագրեսիվ վարքի ուսումնասիրման մեջ:

ԹԵՄԱ 4. Ագրեսիվ վարքի ձևավորման առանձնահատկությունները:

Այս բաժինը նվիրված է ագրեսիվ վարքի զարգացումը պայամանավորող արտաքին և ներքին գործոնների վերլուծությանը: Այս բաժնում քննարկվելու են և նկարագրվելու են այն բոլոր կենսաբանական, անհատահոգեբանական, սոցիալական, ինչպես նաև արտաքին միջավայրի ֆիզիկական գործոնները, որոնք կարող են ազդել ագրեսիվ վարքի ձևավորման և զարգացման վրա:

Թեմա 4.1. Ագրեսիվ վարքի ձևավորման ներքին նախադրյալները:

Ագրեսիվ վարքի ձևավորման *կենսաբանական նախադրյալները*: ԿՆՀ-ի դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Ժառանգականության դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Հորմոնների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Ագրեսիվ վարքի *անհատահոգեբանական նախադրյալները*: Ագրեսիվ վարքի սեռային և տարիքային առանձնահատկությունները: Ագրեսիվ վարքի անձնային առանձնահատկությունները: Թշնամանք և ագրեսիվություն: Հուզական անկայունություն և ագրեսիվություն: Տագնապալիություն և ագրեսիվություն: Նեյրոտիզմ, փսիխոտիզմ, հուզական զգայունություն և ագրեսիվ վարք: Վերահսկման լրկուս և ագրեսիա:

Ինքնուրույն աշխատանք

4.1.1. Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Бизюк А.П. Основы нейropsychологии. Уч. Пособие. СПб: Речь. 2005. 293 с.

2. Блум Ф., Лейзерсон А., Хофстедтер Л. Мозг, разум и поведение. //М.:Мир. – 1988. 248 с.
3. Голдберг Э. Управляющий мозг: Лобные доли, лидерство и цивилизация. /Пер. С англ. Д. Бугакова. М.: Смысл. 2003. 335 с.
4. Гордеев С. А. Особенности биоэлектрической активности мозга при высоком уровне тревожности человека. // Физиология человека, 2007. Т. 33. №4. с.11-17
5. Завражин С. А. Агрессивные фантазии в детском и подростковом возрасте. // Вопросы психологии 1993. №5. с. 43-56
6. Змановская Е. В. Девиантология (психология отклоняющегося поведения). М.: Изд-во Академия. 2003. 281с.
7. Зоуир А. А. Рашид. Кросскультурное изучение агрессивного поведения у подростков России и Йемена: автореф. канд. дисс./ Зоуир А. Али Рашид. СПб. 1999.
8. Степанян Л.С., Григорян В.Г. Влияние выполнения агрессивного задания на регуляторные механизмы ВНС у подростков. «Гигиена и санитария», Москва, 2006, №6, 62-64
9. Степанян Л.С., Григорян В.Г., Агабабян А.Р., Степанян А.Ю. Влияние агрессогенного фактора на уровень активности коры головного мозга подростков. //Физиология человека, Москва, 2007, Т. 33, №1, стр. 41-45
10. Степанян Л.С., Григорян В.Г., Степанян А.Ю. Межполушарная асимметрия в системной деятельности мозга при коррекции подростковой агрессивности. // Журнал «Асимметрия», Москва, 2009, Т.3, №2, стр. 41-50

4.1.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Սեռային քրոմոսոմներով պայմանավորված շեղումները ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:
2. Գլխուղեղի կեղևային շրջանների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:
3. Դեռահասային ագրեսիվության առանձնահատկությունները:
4. Տազնապալիությունը և ագրեսիվ վարքի դինամիկան:
5. Ինքնագնահատականը և ագրեսիան:
6. Ագրեսիան որպես պաշտպանական մեխանիզմ:

Թեմա 4.2. Ագրեսիվ վարքի ձևավորման արտաքին նախադրյալները:

Ագրեսիվ վարքի ձևավորման *սոցիալական նախադրյալները*: Ընտանեկան փոխհարաբերությունների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Ագրեսիվ վարքի առանձնահատկությունները լիարժեք և ոչ լիարժեք ընտանիքներում: Հասակակիցների հետ փոխհարաբերությունների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Կոգնիտիվ գործընթացների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: *Արտաքին միջավայրի ֆիզիկական երևույթների* դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Տապի, աղմուկի, նեղվածքի և աղտոտված օդի ազդեցությունը ագրեսիվ վարքի ձևավորման վրա: ՁԼՄ-ը որպես ագրեսիայի առաջացման աղբյուր: Համակարգչային խաղերի ազդեցությունը ագրեսիվ վարքի ձևավորման վրա:

Ինքնուրույն աշխատանք

4.1.1. Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Менделевич В.Д. Психология девиантного поведения. М. МЕДпресс. 2001. 432с.
2. Паренс Г. Агрессия наших детей. М. 1997. 115 с.
3. Семенюк Л. М. Психологические особенности агрессивного поведения. 1996. 117с.
4. Скотт Дж. Г. Конфликты, пути их преодоления. Киев. 1991. 191с.
5. Смирнова Е.О., Радева Р.Е. Компьютерная игра младшего школьника. //Образование и информационная культура. Социологические аспекты /под ред. В.С. Собкина. М.: Центр социологии образования РАО. 2000. с. 370-392.
6. Степанян Л.С., Григорян В.Г., Агабабян А.Р., Степанян А.Ю. Изменения амплитуды волны Р300 под влиянием «агрессивной» компьютерной игры у подростков с различным уровнем исходной агрессивности и конфликтности. //Журнал ВНД, Москва, 2007, Т. 57, №4, 419-425
7. Степанян Л.С., Григорян В.Г., Степанян А.Ю. Гендерные особенности межполушарных взаимодействий при моделировании аг-

рессогенной среды. //Журнал «Асимметрия», Москва, 2008, №3, 5-19.

8. Фомичева Ю.В., Шмелев А.Г., Бурмистров И.В. Психологические корреляты увлеченности компьютерными играми. //Вестник МГУ, сер.14 (Психология). 1991. №3. с. 27-39.

Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Ընտանեկան ղեկավարման ոճը և ագրեսիվ վարքը:
2. Պատիժների և խրախուսանքների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:
3. Սիրլինգների հետ հարաբերությունների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:
4. Ագրեսիվ վարքի ձևավորման Պատերսոնի մոդելը:
5. Ժամանակակից մուլտֆիլմերի ազդեցությունը ագրեսիվ վարքի ձևավորման վրա:
6. Ագրեսիվ բնույթի համակարգչային խաղերի ազդեցությունը ագրեսիվ վարքի ձևավորման վրա:
7. Երաժշտության տարատեսակները և ագրեսիան:

Բաժին 2. ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՇՏԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ: ԹԵՄԱ 5. ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ և ՇՏԿՈՒՄ:

Այս բաժնում նկարագրված են ագրեսիվության արտահայտվածության մակարդակի, կառուցվածքի ագրեսիվության հատկանիշների և տեսակների, ձևավորման, դրդման, աճման և նվազեցման պատճառների և գործոնների հայտնաբերման մեթոդները: Այս բաժնում նկարագրված են նաև ագրեսիվության շտկման, կառավարման և թերապիայի մեթոդները

Թեմա 5.1. Ագրեսիվ վարքի նախադրվածության ախտորոշում:

Ագրեսիվ վարքի զարգացման նախադրվածության ախտորոշման էմպիրիկ մեթոդներ՝հարցաշարեր, պրոյեկտիվ և

նկարչական մեթոդներ: Բասս-Դարկիի հարցաշար; Բաս-Պերիի հարցաշար; Հոգեկան վիճակների ախտորոշում ըստ Այզենկի; Ագրեսիվությունը հարաբերություններում ըստ Ասինգերի; Ռեակտիվ և անձնային ագրեսիվության ախտորոշում ըստ Սպիլբերգեր-Էսանինի; “Գոյություն չունեցող կենդանի” պրոյեկտիվ մեթոդը; “Վագների Ձեռքի թեստ” պրոյեկտիվ մեթոդը; Արձանագրության կազմումը և դրա մեկնաբանությունը:

Ինքնուրույն աշխատանք

5.1.1. Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Агрессивное поведение лиц с психическими расстройствами: диагностика, судебно-психиатрическая экспертиза, профилактика (пособие для врачей) / Под ред. Т.Б. Дмитриевой, Б.В. Шостаковича – М.: Минздрав РФ ВНИИОСП им Сербского, 2000. – 25 с.
2. Асанова Н.К., Ермолина Л.А., Сухотина Л.А. Ранняя диагностика патологических форм девиантного поведения и проведение лечебно-оздоровительных мероприятий у детей и подростков. – М.: Минздрав, НИИ психиатрии, 1992. – 20 с.
3. Бурлачук Л.Ф., Морозов С.М. Словарь-справочник по психодиагностике. — СПб.: Питер, 1999. — 528 с.
4. Гилинский Я.И., Гурвич И.Н, Русакова М., Симпура Ю., Хлопушин Р. Девиантность подростков: Теория, методология, эмпирическая реальность – СПб.: Медицинская пресса, 2001. – 200
5. Куликов Л.В. Психологическое исследование. – 2-е изд. — СПб., 1995. — 136 с.
6. Степанян Л.С., Григорян В. Г., Степанян А.Ю. Гендерные различия корреляционных связей психологических характеристик у подростков. //Материалы междунар. молодеж. Науч. Конференции «XV Туполевские чтения», Т. VII, 2007, Казань, стр.157-158.

5.1.2. Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Մանկական ագրեսիվության ուսումնասիրման առանձնահատկությունները:
2. Դեռահասային ագրեսիվության ախտորոշում:

3. Ագրեսիվ վարքի զարգացումը պայամանավորող հոգեբանական գործոնների ակտորոշումը:

Թեմա 5.2. Ագրեսիվ վարքի կանխարգելիչ միջոցներ և ագրեսիայի կառավարում:

Լարվածության լիցքաթափումը ագրեսիվ գործողությունների օգնությամբ: Կատարսիս և ագրեսիվ վարքի ինքնակառավարում: Ոչ ագրեսիվ վարքի մոդելի ներգործությունը ագրեսիվ վարքի կառավարման մեջ: Ագրեսիվության վերահսկման կոգնիտիվ մեթոդները: Ապրումակցումը և հումորը որպես մարդկային ագրեսիայի կանխարգելման միջոցներ: Սոցիալական կարողությունների թրենինգներ: Վարքային ագրեսիվության շտկման թրենինգ:

Ինքնուրույն աշխատանք

5.2.1.Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Агрессия у детей и подростков. Учебное пособие. /Под ред. Н.М. Платоновой. СПб.: Речь, 2004, 336с
2. Берулова Г.А. Методологические основы деятельности практического психолога. М., 2003.
3. Бэрон Р., Ричардсон Д. Агрессия. СПб.: Питер. 2000. 351 с.
4. Захаров А. И. Как предупредить отклонения в поведении ребенка. Изд. 2-е М., 1993
5. Stepanyan L.S. Psychophysiological mechanisms of the teenage aggression and its correction. // Acta Neurobiologiae Experimentalis, 2009, 69 (3), IX FENS Congress 2009, Warsaw, 9-12, September, P.167.
6. Степанян Л.С. Влияние психокоррекционных мероприятий на уровень тревожности у «высокоагрессивных подростков» Межд. научной конференции «Проблемы развития личности», Ереван, Армения, 23-24 октября, 2009
7. Степанян Л.С. Мозговые корреляты снижения агрессивности у подростков под влиянием психокоррекции //Межд. науч. конф. «Актуальные проблемы интегративной деятельности и пластич-

ности нервной системы», посвящ. 80-летию акад. В.В.Фанарджяна, Ереван, 2009

5.2.2. Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Դեռահասների և երեխաների ինքնաքայքայիչ վարքի կանխարգելումը:
2. Երեխաների և դեռահասների ագրեսիվ վարքի չեզոքացման տեխնոլոգիաները:
3. Ինտերակտիվ խաղերն ու վարժությունները որպես մանկական ագրեսիվության կանխարգելման միջոցներ:

Թեմա 5.3. Ագրեսիվ վարքի հոգեթերապիա և հոգեշտկում:

Ագրեսիվ վարքի շտկմանն ուղղված տարբեր վարքային, հոգեվերլուծական, հումանիստական մեթոդները: Ագրեսիայի ինքնակառավարում: Անհատական հոգեշտկողական տեխնոլոգիաները ագրեսիվ դեռահասների և երեխաների հետ աշխատանքի ժամանակ: Ընտանեկան թերապիայի տեխնոլոգիաները ագրեսիվ երեխաների հետ աշխատանքի ժամանակ:

Ինքնուրույն աշխատանք

5.3.1. Սկզբնաղբյուրների ուսումնասիրում

1. Гарднер Р. Психотерапия детских проблем. СПб.: Речь, 2002, 416 с.
2. Кулаков С. А. Психопрофилактика и психотерапия в средней школе. СПб. 1996. 129с
3. Пезешкиан Н. Позитивная семейная психотерапия. М., 1993.

5.3.2. Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ

1. Քրոնիկական հիվանդ երեխա ունեցող ընտանիքների ագրեսիվ միտումների հոգեթերապիա:
2. Մինիմալ ուղեղային դիսֆունկցիա ունեցող երեխաների ագրեսիվ վարքի հոգեթերապիա:
3. Աուտիզմով հիվանդ երեխաների ագրեսիվ վարքի հոգեշտկում:
4. Արտթերապիան և ագրեսիվ վարքի շտկումը:

**«ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Թեմա1. Ագրեսիայի հիմնախնդիրները հոգեբանության մեջ:

Ագրեսիա հասկացությունը, էությունը և նրա սոցիալ-հոգեբանական բնույթը, ինչպես նաև ագրեսիայի դերն ու նշանակությունը ժամանակակից հասարակությունում: Ագրեսիա և ագրեսիվություն՝ պատճառահետևանքային կապերը: Ագրեսիվության խնդիրը տարբեր տեսակետներից՝ անձի հոգեբանության, մանկական և տարիքային հոգեբանության, բժշկական հոգեբանության, նյարդաֆիզիոլոգիայի, հոգեֆիզիոլոգիայի, փիլիսոփայության, մանկավարժության և այլն:

Ագրեսիվությունը որպես երկբևեռ երույթ՝ հիպոագրեսիվություն և հիպերագրեսիվություն:

Հիպոագրեսիվություն՝ վարքի պասիվություն, հետևություն, ենթարկվողություն, հարմարվողականություն, կոնֆորմություն:

Հիպերագրեսիվություն՝ զայրույթ, թշնամանք, կոնֆլիկտների հրահրում, պաթոլոգիական երևակայություն:

Ագրեսիայի գործառույթները: Պաշտպանական ագրեսիա: Հարձակվողական ագրեսիա: Ագրեսիան ինքնահաստատման գործընթացում: Ստեղծագործական ագրեսիա:

Ագրեսիայի կառուցվածքը, հուզական, կոգնիտիվ և վարքային բաղադրիչները: Ագրեսիվություն և թշնամանք՝ պատճառահետևանքային կապերը: Ագրեսիվություն և զայրույթ: Ագրեսիվություն և դաժանություն:

Ագրեսիայի տեսակները: Ըստ արտահայտման ձևի՝ բացահայտ և թաքնված ագրեսիա: Ըստ ուղղվածության՝ աուտոագրեսիա, ուղղակի (ուղղված օբյեկտին) և անուղղակի (տեղաշարժված մեկ այլ օբյեկտին) ագրեսիա: Ըստ կառուցվածքի ագրեսիվությունը լինում է՝ ֆիզիկական և վերբալ ագրեսիա, նեգատիվիզմ, գրգռականություն, մեղքի զգացում: Ըստ նպատակի՝ թշնամական և գործիքային ագրեսիա: Ըստ սոցալ-հոգեբանական իրականացման ձևի՝ կոնստրուկտիվ, դեստրուկտիվ և դեֆիցիտար ագրեսիա: Ըստ դրդապատճառաձևավորող հատկության՝ ագրեսիա-հարձակում և ագրեսիա-պաշտպանություն, չարորակ և բարորակ ագրեսիա:

Ախտաբանական և ոչ ախտաբանական ազրեսիա: Ախտաբանական ազրեսիայի տեսակներ՝ փսիխոտիկ և վերափոխված կամ տրանսֆորմացված ազրեսիա: Ախտաբանական ազրեսիայի մակարդակները:

Թեմա2. Ազրեսիայի ուսումնասիրման հիմնական տեսական մոտեցումները և մոդելները:

Գենետիկական-էվոյուցիոն մոտեցումը ազրեսիայի խնդրին:

Ազրեսիան որպես բնագրային վարք՝ Զ. Ֆրոյդի տեսությունը (հոգե-վերլուծական մոտեցում): Էրոսի և թանատոսի փոխկապակցվածությունը՝ ազրեսիվության ուղղվածությունը ուրիշներին:

Ազրեսիան որպես բնագրային վարք Կ. Լորենցի տեսությունը (էթոլոգիական մոտեցում): Ազրեսիայի կենսաբանական հիմքը: Միջտեսակային և ներտեսակային ազրեսիա: Ազրեսիան գործառույթները՝ տեսակի պահպանման գործառույթ, սերնդի պաշտպանության գործառույթ կենսական տարածության մեջ բաշխման գործառույթ:

Ազրեսիան որպես բնագրային վարք՝ Արդրիի որսորդական վարկածը:

Գիլբուրդի անտրոպոէվոլոգիական մոտեցում:

Սոցիոկենսաբանական մոտեցում:

Էվոյուցիոն մոտեցումների քննադատումը:

Բիհեվիորիստական մոտեցումը ազրեսիայի խնդրին:

Զ. Դոլլարդի և Ն. Միլլերի ազրեսիվության ֆրուստրացիոն տեսությունը: Ս. Ռոզենցվեյգի ֆրուստրացիոն տեսությունը: Ֆրուստրացիա և ազրեսիվություն՝ պատճառահետևանքային կապերը:

Ռոզենցվեյգի ֆրուստրացիոն տեսությունը: Առաջնային ֆրուստրացիա կամ զրկանք: Երկրորդային ֆրուստրացիա՝ խոչընդոտների առկայություն պահանջների բավարարման ճանապարհին: Հակազդումների երկու տեսակներ՝ կայուն պահանջի հակազդում և “Ես”-ի պաշտպանության հակազդում:

Լ. Բերկովիցի «ֆրուստրացիա-ազրեսիա» տեսությունը:

Զիլմանի դրդման տեսությունը: Դրդումը որպես պաշտպանական ազրեսիայի բաղադրիչ:

Ազրեսիվ վարքի կոգնիտիվ մոդելները՝ հուզական և ճանաչողական գործընթացները:

Ա. Բանդուրայի սոցիալական ուսուցման տեսություն:

Էթիկակա-հումանիստական մոտեցումը ագրեսիայի խնդրին:

Ագրեսիան որպես չարիք:

Ինքնաիրականացումը որպես ագրեսիային դիմադրություն:

Ա. Ադլերի Է. Ֆրոյդի, Կ. Ռոջերսի, Ա. Մասլոուի, Վ. Ֆրանկլի և Ա. Ռեանի հիմնական գազափարները:

Ագրեսիան որպես հոգեբանական պաշտպանության մեխանիզմի տարատեսակ:

Թեմա3. Ագրեսիայի սիստեմատիկ ուսումնասիրման մեթոդները:

Դիտման մեթոդի տեսակները՝ դաշտային, լաբորատոր և հրահրելով: Ավտոմոբիլային ազդանշանները ագրեսիայի ուսումնասիրման ժամանակ: Միջանձնային կոնֆրոնտացիաները ագրեսիվ վարքի ուսումնասիրման ժամանակ: Ագրեսիայի «խաղային» միջոցները: Բասի մեթոդը ագրեսիայի ուսումնասիրման մեջ: Բերկովիցի կոնցեպցիան՝ ագրեսիան բացասական գնահատականի ձևով: Թեյլորի կոնցեպցիան՝ փոխադարձ ագրեսիա:

Արխիվային հետազոտություններ՝ տեղեկատվության հավաքագրում հասարակական աղբյուրներից:

Վերբալ տեղեկատվություն:

Անկետաների առավելությունները ագրեսիվ վարքի ուսումնասիրման ժամանակ:

Հարցարանների կիրառումը ագրեսիվության ուսումնասիրության մեջ: Այս մեթոդը թույլ է տալիս հայտնաբերել ինչպես առանձին անհատների, այնպես խմբերի հակվածությունների, դրդապատճառների, շարժառիթների և այլ նման սուբյեկտիվ վիճակների կայունությունը:

Թեստավորումը ագրեսիվության ուսումնասիրության մեջ: Թեստերի տեսակները՝ սուբյեկտիվ և պրոյեկտիվ թեստավորում: Սուբյեկտիվ թեստավորում՝ հարցման տարատեսակ:

Պրոյեկտիվ թեստերի կիրառումը ագրեսիվության ախտորոշման մեջ: Նկարչական մեթոդները: Տարածապատկերային և ընկալչական մեթոդները:

Ինքնակենսագրական
ուսումնասիրման մեջ:

մեթոդը

ագրեսիվության

Թեմա4. Ագրեսիվ վարքի ձևավորման առանձնահատկությունները:

Ագրեսիվ վարքի ձևավորման կենսաբանական նախադրյալները: ԿՆՀ-ի դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Ժառանգականության դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Հորմոնների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:

Ագրեսիվ վարքի *անհատահոգեբանական նախադրյալները*: Ագրեսիվ վարքի սեռային և տարիքային առանձնահատկությունները:

Ագրեսիվ վարքի անձնային առանձնահատկությունները: Թշնամանք և ագրեսիվություն: Հուզական անկայունություն և ագրեսիվություն: Տագնապալիություն և ագրեսիվություն: Նեյրոտիզմ, փսիխոտիզմ, հուզական զգայունություն և ագրեսիվ վարք: Վերահսկման լրկուս և ագրեսիա:

Ագրեսիվ վարքի ձևավորման *սոցիալական նախադրյալները*: Ընտանիքի դերը ագրեսիվության ձևավորման մեջ: Ընտանիքի անդամների փոխհարաբերությունների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Ծնողների հակազդումը երեծայի վարքին: Ընտանեկան ներդաշնակության մակարդակը: Սիբլինգների հարաբերությունների բնույթը:

Սխալ դաստիարակության տիպերը և դրանց դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Դաստիարակություն “թերխնամքի” ձևով: Դաստիարակություն “գերխնամքի” ձևով: Դաստիարակություն “Ընտանիքի պաշտամունք”-ի ձևով: Դաստիարակություն “Մոխրոտիկ”-ի ձևով: Ընտանեկան ղեկավարման բնույթը:

Ագրեսիվ վարքի առանձնահատկությունները լիարժեք և ոչ լիարժեք ընտանիքներում:

Հասակակիցների հետ փոխհարաբերությունների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:

Կոգնիտիվ գործընթացների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Արտաքին միջավայրի ֆիզիկական երևույթների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ: Տապի, աղմուկի, նեղվածքի և աղտոտված օդի ազդեցությունը ագրեսիվ վարքի ձևավորման վրա:

ԶԼՄ-ները որպես ագրեսիայի առաջացման աղբյուր:
Համակարգչային խաղերի ազդեցությունը ագրեսիվ վարքի
ձևավորման վրա:

Թեմա 5. Ագրեսիվ վարքի ախտորոշում և շտկում:

Ագրեսիվ վարքի զարգացման նախադրվածության ախտորոշման էմպիրիկ մեթոդներ՝ հարցաշարեր, պրոյեկտիվ և նկարչական մեթոդներ: Բասս-Դարկիի հարցաշար; Բաս-Պերիի հարցաշար; Հոգեկան վիճակների ինքնագնահատականի ախտորոշում ըստ Այզենկի; Ագրեսիվությունը հարաբերություններում ըստ Ասինգերի; Ռեակտիվ և անձնային ագրեսիվության ախտորոշում ըստ Սպիլբերգեր-Խանինի; թշնամանքի Այովյան հարցարան, Ջաքսի և Վալտերի ագրեսիվության սանդղակ: Նկարչական պրոյեկտիվ մեթոդներ՝ “Գոյություն չունեցող կենդանի”; “Տուն, ծառ, մարդ”, “Իմ ընտանիքը”: Ընկալչական պրոյեկտիվ մեթոդներ՝ “Վագների Ձեռքի թեստ”; Ռորշախի թեստ, թեմատիկ ապերցեսպիայի թեստ (ԹԱՏ): Ռոզենցվեյգի ֆրուստրացիայի թեստ:

Արձանագրության կազմումը և դրա մեկնաբանությունը:

Ագրեսիվության կանխարգելման և շտկման մեթոդներ: Լարվածության լիցքաթափումը ագրեսիվ գործողությունների օգնությամբ: Կատարսիս և ագրեսիվ վարքի ինքնակառավարում: Ոչ ագրեսիվ վարքի մոդելի ներգործությունը ագրեսիվ վարքի կառավարման մեջ: Ագրեսիվության վերահսկման կոգնիտիվ մեթոդները: Ապրումակցումը և հումորը որպես մարդկային ագրեսիայի կանխարգելման միջոցներ: Խաղը որպես ագրեսիայի շտկման միջոց: Սոցիալական կարողությունների թրենինգներ: Վարքային ագրեսիվության շտկման թրենինգ:

Ագրեսիվ վարքի շտկման ուղղված տարբեր վարքային, հոգեվերլուծական հումանիստական մեթոդները: Ագրեսիայի ինքնակառավարում: Անհատական հոգեշտկողական տեխնոլոգիաները ագրեսիվ դեռահասների և երեխաների հետ աշխատանքի ժամանակ: Ընտանեկան թերապիայի տեխնոլոգիաները ագրեսիվ երեխաների հետ աշխատանքի ժամանակ:

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. «Ագրեսիա» հասկացությունը, էությունը և նրա սոցիալ-հոգեբանական բնույթը:
2. Ագրեսիայի տեսակները:
3. Ագրեսիայի կառուցվածքը:
4. Ագրեսիայի հիմնական գործառույթները:
5. Գործիքային և դրդապատճառային ագրեսիայի առանձնահատկությունները:
6. Ագրեսիան որպես բնագրային վարք՝ Զ. Ֆրոյդի տեսությունը (հոգեվերլուծական մոտեցում):
7. Ագրեսիան որպես բնագրային վարք Կ. Լորենցի տեսությունը (էթոլոգիական մոտեցում):
8. Ագրեսիան որպես բնագրային վարք՝ Արդրիի որսորդական վարկածը:
9. Գիլբերդի անտրոպոէկոլոգիական մոտեցում և սոցիոկենսաբանական մոտեցում:
10. Զ. Դոլլարդի և Ն. Միլլերի ագրեսիվության ֆրուստրացիոն տեսությունը:
11. Ռոզենցվեյզի ֆրուստրացիոն տեսությունը:
12. Լ. Բերկովիցի «ֆրուստրացիա-ագրեսիա» տեսությունը:
13. Զիլմանի դրդման տեսությունը: Դրդումը որպես պաշտպանական ագրեսիայի բաղադրիչ:
14. Ագրեսիվ վարքի կոգնիտիվ մոդելները՝ հուզական և ճանաչողական գործընթացները:
15. Ա. Բանդուրայի սոցիալական ուսուցման տեսություն:
16. Հումանիստական մոտեցումը ագրեսիայի հիմնախնդրին:
17. Ագրեսիայի ուսումնասիրման հիմնական մեթոդները՝ դիտում, արխիվային հետազոտություններ, վերբալ տեղեկատվություն, անկետաներ:
18. Թեստավորումը ագրեսիայի ուսումնասիրման մեջ: Հարցարաններ և պրոյեկտիվ մեթոդիկաներ:
19. Ինքնակենսագրական մեթոդը ագրեսիվության ուսումնասիրման մեջ:
20. Ագրեսիվ վարքի ձևավորման կենսաբանական նախադրյալները:
21. ԿՆՀ-ի դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:

22. Ժառանգականության դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:
23. Հորմոնների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:
24. Ագրեսիվ վարքի սեռային առանձնահատկությունները:
25. Ագրեսիվ վարքի տարիքային առանձնահատկությունները:
26. Ագրեսիվ վարքի անձնային առանձնահատկությունները:
27. Թշնամանք և ագրեսիվություն:
28. Հուզական անկայունություն և ագրեսիվություն:
29. Տագնապալիություն և ագրեսիվություն:
30. Նեյրոտիզմ, փսիխոտիզմ, հուզական զգայունություն և ագրեսիվ վարք:
31. Ընտանիքի դերը ագրեսիվության ձևավորման մեջ:
32. Սխալ դաստիարակության տիպերը և դրանց դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:
33. Ագրեսիվ վարքի առանձնահատկությունները լիարժեք և ոչ լիարժեք ընտանիքներում:
34. Հասակակիցների հետ փոխհարաբերությունների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:
35. Կոզնիտիվ գործընթացների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:
36. Արտաքին միջավայրի ֆիզիկական երևույթների դերը ագրեսիվ վարքի ձևավորման մեջ:
37. ԶԼՄ-ները որպես ագրեսիայի առաջացման աղբյուր:
38. Համակարգչային խաղերի ազդեցությունը ագրեսիվ վարքի ձևավորման վրա:
39. Ագրեսիվ վարքի շտկման ուղղված տարբեր վարքային, հոգեվերլուծական, հումանիստական մեթոդները:
40. Ագրեսիվության երաժշտական թերապիա:
41. Ագրեսիվության արտթերապիա:
42. Ագրեսիայի ինքնակառավարում:
43. Անհատական հոգեշտկողական տեխնոլոգիաները ագրեսիվ դեռահասների և երեխաների հետ աշխատանքի ժամանակ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավանեսյան Հ. Մ. Փորձարարական հոգեբանություն: //Ուս. Ձեռնարկ: Եր.: Էդիթ Պրինտ, 2010թ., 288 էջ:
2. Ավանեսյան Հ.Մ., Պապոյան Վ.Լ., Գալստյան Ա.Ս, Բեջանյան Ա.Տ., Ղազարյան Գ.Հ., Հովակիմյան Գ.Ռ. Հոգեբանական և սոցիալական աշխատանքները ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում: //Մեթոդական ձեռնարկ: Եր.: «Առողջության և կրթության հայկական կենտրոն», 2009 թ., 151էջ:
3. Արզումանյան Ա.Զ., Մկրտչյան Ա.Շ., Սարգսյան Վ.Ժ. Կիրառական հոգեբանության պրակտիկում, Երևան, 2002թ., 392 էջ:
4. Агрессивное поведение лиц с психическими расстройствами: диагностика, судебно-психиатрическая экспертиза, профилактика (пособие для врачей) /Под ред. Т.Б. Дмитриевой, Б.В. Шостаковича – М.: Минздрав РФ ВНИИОСП им Сербского, 2000. – 25 с.
5. Агрессия у детей и подростков. Учебное пособие. /Под ред. Н.М. Платоновой. СПб.: Речь, 2004, 336с
6. Адлер А. Понять природу человека. – СПб., 2000. – 256с.
7. Асанова Н.К., Ермолина Л.А., Сухотина Л.А. Ранняя диагностика патологических форм девиантного поведения и проведение лечебно-оздоровительных мероприятий у детей и подростков. – М.: Минздрав, НИИ психиатрии, 1992. – 20 с.
8. Басс А. Психология агрессии /Вопросы психологии, 1967, №3, с.60-67.с.27-28.
9. Берковиц Л. Агрессия. Причины, последствия и контроль. СПб.-М., 2001.
10. Берулова Г.А. Методологические основы деятельности практического психолога. М., 2003.
11. Бизюк А.П. Основы нейропсихологии. Уч. Пособие. СПб: Речь. 2005. 293 с.
12. Блум Ф., Лейзерсон А., Хофстедтер Л. Мозг, разум и поведение. //М.:Мир. – 1988. 248 с.
13. Бурлачук Л.Ф., Морозов С.М. Словарь-справочник по психодиагностике. — СПб.: Питер, 1999. — 528 с.
14. Бэрн Р., Ричардсон Д. Агрессия. СПб., Питер, 1997, 400с

15. Гарднер Р. Психотерапия детских проблем. СПб.:Речь, 2002, 416 с.
16. Гишинский Я.И., Гурвич И.Н, Русакова М., Симпура Ю., Хлопушин Р. Девиантность подростков: Теория, методология, эмпирическая реальность – СПб.: Медицинская пресса, 2001. – 200
17. Голдберг Э. Управляющий мозг: Лобные доли, лидерство и цивилизация. / Пер. С англ. Д. Бугакова. М.: Смысл. 2003. 335 с.
18. Гордеев С. А. Особенности биоэлектрической активности мозга при высоком уровне тревожности человека. // Физиология человека, 2007. Т. 33. №4. с.11-17
19. Ениколопов С.Н. Понятие агрессии в современной психологии // Прикладная психология №2, 2001, с. 60-72
20. Завражин С. А. Агрессивные фантазии в детском и подростковом возрасте. // Вопросы психологии 1993. №5. с. 43-56
21. Захаров А. И. Как предупредить отклонения в поведении ребенка. Изд. 2-е М., 1993
22. Змановская Е. В. Девиантология (психология отклоняющегося поведения). М.: Изд-во Академия. 2003. 281с.
23. Зоуир А. А. Рашид. Кросскультурное изучение агрессивного поведения у подростков России и Йемена: автореф. канд. дисс./ Зоуир А. Али Рашид. СПб. 1999.
24. Куликов Л.В. Психологическое исследование. – 2-е изд. — СПб., 1995. — 136 с.
25. Кулаков С. А. Психопрофилактика и психотерапия в средней школе. СПб. 1996. 129с
26. Курбатова Т.Н. Структурный анализ агрессии //Б.Г.Ананьев и ленинградская школа в развитии современной психологии. СПб., 1995
27. Лоренц К. Агрессия (так называемое "зло"): Пер. с нем.М.: Издательская группа "Прогресс", "Универс",1994. 272 с.
28. Майерс Д. Социальная психология. СПб., Питер, 1997.
29. Менделевич В.Д. Психология девиантного поведения. М. МЕДпресс. 2001. 432с.
30. Паренс Г. Агрессия наших детей. М. 1997. 115 с.
31. Пезешкиан Н. Позитивная семейная психотерапия. М., 1993
32. Реан А.А. Агрессия и агрессивность личности. СПб., Психологический журнал, 1996, N 5, с.3-17.

33. Румянцева Т.Г. Понятие агрессивности в современной зарубежной психологии // Вопросы психологии, 1991, N 1, с.82-86.
34. Семенюк Л. М. Психологические особенности агрессивного поведения. 1996. 117с.
35. Скотт Дж. Г. Конфликты, пути их преодоления. Киев. 1991. 191с.
36. Смирнова Е.О., Радева Р.Е. Компьютерная игра младшего школьника. //Образование и информационная культура. Социологические аспекты /под ред. В.С. Собкина. М.: Центр социологии образования РАО. 2000. с. 370-392.
37. Степанян Л.С., Григорян В.Г., Агабабян А.Р., Степанян А.Ю. Влияние выполнения агрессивного задания на регуляторные механизмы ВНС у подростков. «Гигиена и санитария», Москва, 2006, №6, 62-64
38. Степанян Л.С., Григорян В.Г., Агабабян А.Р., Степанян А.Ю. Влияние агрессогенного фактора на уровень активности коры головного мозга подростков. //Физиология человека, Москва, 2007, Т. 33, №1, стр. 41-45
39. Степанян Л.С., Григорян В.Г., Агабабян А.Р., Степанян А.Ю. Изменения амплитуды волны Р300 под влиянием «агрессивной» компьютерной игры у подростков с различным уровнем исходной агрессивности и конфликтности. //Журнал ВНД, Москва, 2007, Т. 57, №4, 419-425
40. Степанян Л.С., Григорян В. Г., Степанян А.Ю. Гендерные различия корреляционных связей психологических характеристик у подростков. //Материалы междунар. молодеж. Науч. конференции «XV Туполевские чтения», Т. VII, 9-10 ноября, 2007, Казань, стр.157-158
41. Степанян Л.С., Григорян В.Г., Степанян А.Ю. Гендерные особенности межполушарных взаимодействий при моделировании агрессогенной среды. //Журнал «Асимметрия», Москва, 2008, №3, 5-19
42. Степанян Л.С., Григорян В.Г., Степанян А.Ю. Межполушарная асимметрия в системной деятельности мозга при коррекции подростковой агрессивности. // Журнал «Асимметрия», Москва, 2009, Т.3, №2, стр. 41-50

43. Степанян Л.С. Влияние психокоррекционных мероприятий на уровень тревожности у «высокоагрессивных подростков» Межд. научной конференции «Проблемы развития личности», Ереван, Армения, 23-24 октября, 2009
44. Степанян Л.С. Мозговые корреляты снижения агрессивности у подростков под влиянием психокоррекции //Межд. науч. конф. «Актуальные проблемы интегративной деятельности и пластичности нервной системы», посвящ. 80-летию акад. В.В.Фанарджяна, Ереван, 2009
45. Фомичева Ю.В., Шмелев А.Г., Бурмистров И.В. Психологические корреляты увлеченности компьютерными играми. //Вестник МГУ, сер.14 (Психология). 1991. №3. с. 27-39
46. Фромм Э. Анатомия человеческой деструктивности. М.: Республика. 1994. 447 с.
47. Хекхаузен Х. Агрессия. // Мотивация и деятельность. М., 1986, 405 с.
48. Хьелл, Л., Зиглер, Д. Теории личности: основные положения, исследования и применение. СПб.: 2003. с.312.

Ազդեսիվության ախտորոշման հարցաշար ըստԲասս-Պերիի (BPAQ)

Հրահանգ. Կարդալով այս պնդումները, որոշե՛ք թե ինչքանով են դրանք համապատասխանում Ձեր հիմնական վարվելաձևին, Ձեր կերպարին, և պատասխանեք 2 հնարավոր պատասխաններից մեկով՝ “այո” կամ “ոչ”։ Երկար մի խորհեք, ընտրեք պատասխանի այն տարբերակը, որը առաջինը կգա Ձեր մտքին։ Այսպեղ չկան ճիշտ կամ սխալ, լավ կամ վատ տարբերակներ։ Պատասխանեք, ոչինչ բաց չթողնելով։

Պնդումներ	այո	ոչ
1. Երբեմն ես չեմ կարողանում հաղթահարել ուրիշին հարվածելու ցանկությունս։		
2. Եթե ես ինչ-որ բանում չեմ համաձայնվում ընկերներիս հետ, ուղիղ ասում եմ նրանց դրա մասին։		
3. Ես արագ ավերից դուրս եմ գալիս, բայց արագ էլ հանգստանում եմ։		
4. Պատահում է, որ խանդից խելագարվում եմ։		
5. Եթե ինձ հրահրեն, ես կարող եմ ուրիշին հարվածել։		
6. Ես հաճախ չեմ համաձայնվում ուրիշների հետ։		
7. Երբ որ ինձ մոտ ինչ-որ բան չի ստացվում, ես նյարդայնանում եմ։		
8. Երբեմն ինձ թվում է, որ կյանքը ինձ ինչ-որ բան պակաս է տվել։		
9. Եթե ինձ ինչ-որ մեկը հարվածի, ես անպայման կպատասխանեմ նրան։		
10. Այն մարդկանց, որոնք ինձ նյարդայնացնում են, ասում եմ այն ամենը ինչ մտածում եմ իրենց մասին։		
11. Երբեմն ինձ թվում է, որ ես հիմա կպայթեմ։		
12. Ուրիշների բախտը միշտ բերում է։		
13. Ես վիճում եմ ավելի հաճախ, քան ուրիշները։		
14. Ես միշտ բանավիճում եմ այն մարդկանց հետ, ովքեր ինձ հետ համամիտ չեն։		
15. Ես հանգիստ բնավորություն ունեմ։		
16. Ես չեմ հասկանում, թե ինչու երբեմն ես ինձ շատ տխուր եմ զգում։		
17. Եթե իմ իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ լինի ֆիզիկական ուժ գործադրել, ես չեմ հապաղի։		

18. Ընկերներս ասում են, որ ես վիճող եմ:		
19. Իմ ընկերներից ոմանք կարծում են, որ ես շուտ բռնկվող եմ:		
20. Ես գիտեմ, որ այսպես կոչված իմ որոշ ընկերներ բանքասում են իմ մասին:		
21. Որոշ մարդիկ իրենց դիմելու ձևով կարող են ինձ հասցնել ծեծկոտուքի:		
22. Երբեմն ես առանց որևէ հատուկ պատճառի դուրս եմ գալիս ավերիցս:		
23. Ես չեմ վստահում շատ բարյացակամ մարդկանց:		
24. Ես չեմ կարողանում ինչ-որ պատճառ պատկերացնել, որի համար կարելի է մարդուն հարվածել:		
25. Ինձ դժվար է զսպել իմ զայրույթը:		
26. Երբեմն ինձ թվում է, որ մարդիկ իմ հետևից ծիծաղում են ինձ վրա:		
27. Պատահել է, երբ ես սպառնացել եմ իմ ծանոթներին:		
28. Եթե մարդը ինձ հետ շատ բարեհամբյուր է, ուրեմն ինչ-որ բան է պետք նրան:		
29. Երբեմն ես այնքան էի դուրս գալիս ավերիցս, որ իրեր էի կոտրում:		

Բանալի՝ յուրաքանչյուր համընկնում գնահատվում է 1 միավոր

Ֆիզիկական ագրեսիա	այո	1, 5, 9, 13, 17, 21, 27, 29
	ոչ	24
Զայրույթ	այո	3, 7, 11, 19, 22, 25
	ոչ	15
Թշնամանք	այո	4, 8, 12, 16, 20, 23, 26, 28
Վերբալ ագրեսիա	այո	2, 6, 10, 14, 18

Ագրեսիվության ինտեգրալ ցուցանիշը հաշվարկվում է ֆիզիկական ագրեսիայի, զայրույթի և թշնամանքի սանդղակների միավորների գումարով՝

Ֆիզիկական ագրեսիա՝ վարքում ֆիզիկական ագրեսիայի հակվածություն (վարքային բաղադրիչ), նորմա՝ 4-5

Զայրույթ՝ գրգռականության հակվածություն (հուզական բաղադրիչ), նորմա՝ 3-5;

Թշնամանք՝ կասկածամտություն և վիրավորվողականություն ենթասանդղակներ ներառող սանդղակ (կոգնիտիվ բաղադրիչ), նորմա՝ 3-5;

Վերբալ ագրեսիա՝ բացասական զգացմունքների արտահայտում բղավոցների, բառային պատասխանների (անեծքներ, ահաբեկություններ) ձևով, նորմա՝ 2-4:

Մոտիվացիոն ազդեցիվության ախտորոշում ըստ Բասս-Դարկիի հարցաշարի

Անձնային հարցաշարը մշակված է Ա. Բասի և Ա. Դարկի կողմից 1957թ. և նպատակաուղղված է ազդեցիվ և թշնամական հակազդումների ախտորոշման համար:

Թեստը կազմված է 75 պնդումներից, որոնց հետազոտվողը պետք է պատասխանի «այո» կամ «ոչ» պատասխանով: Ա. Բասը և Ա. Դարկին առանձնացնում են հակազդումների հետևյալ տեսակները՝

1. ֆիզիկական ազդեցիա՝ ֆիզիկական ուժի գործածում այլ մարդկանց նկատմամբ;
2. անուղղակի ազդեցիա՝ անուղղակի ճանապարհով ուղղված այլ մարդու կամ ընդհանրապես ոչ ոքի չուղղված;
3. գրգռվածություն՝ բացասական զգացմունքների դրսևորման պատրաստակամություն նվազագույն գրգռվածության պայմաններում;
4. նեգատիվիզմ՝ ընդդիմական վարքածն պասիվ հակառակվելուց մինչև ակտիվ պայքար ընդունված սովորությունների և օրենքների դեմ;
5. վիրավորանք՝ նախանձ և ատելություն շրջապատողների նկատմամբ իրական և երևակայական գործողությունների համար;
6. կասկածամտություն՝ շրջապատողների նկատմամբ թերահավատությունից և զգուշությունից մինչև այն համոզմունքը, որ այլ մարդիկ ծրագրում են և վնաս են հասցնում ;
7. վերբալ ազդեցիա՝ բացասական զգացմունքների արտահայտումը ինչպես բղավոցների, այնպես էլ բառային պատասխանների (անեծքներ, ահաբեկություններ) ձևով;
8. մեղքի զգացում՝ արտահայտում է սուբյեկտի հնարավոր համոզմունքը նրանում, որ նա հանդիսանում է վատ մարդ, չար արարաքներ է կատարում, ինչպես նաև խղճի խայթը:

Հրահանգ՝ կարդալով կամ լսելով այս պնդումները, որոշե՛ք թե ինչքանով են դրանք համապատասխանում Ձեր հիմնական վարվելաձևին, Ձեր կերպարին, և պատասխանեք 4 հնարավոր պատասխաններից մեկով՝ “այո”, “երևի այո”, “ոչ”, “երևի ոչ”, նշելով Ձեր պատասխանը հարցի վերջում առանձնացված տեղում:

	Այո	Երևի այո	Ոչ	Երևի ոչ
1.Երբեմն ես չեմ կարողանում հաղթահարել ուրիշին վնաս պատճառելու ցանկությունս:				
2.Երբեմն բամբասում եմ այն մարդկանցից, ում չեմ սիրում:				
3.Ես հեշտությամբ նյարդայնանում եմ, բայց հեշտ էլ հանդարտվում եմ:				
4.Եթե ինձ շատ չխնդրեն, ես չեմ կատարի խնդրանքը:				
5.Միշտ չէ, որ ստանում եմ իմ հասանելիքը:				
6.Ես գիտեմ, որ մարդիկ խոսում են իմ ետևից:				
7.Եթե ես չեմ ողջունում իմ ընկերների պահվածքը, ես այդ մասին զգացնել եմ տալիս:				
8.Երբ ստիպված եմ եղել խաբել մեկին, ինձ երկար է տանջել խղճիս խայթը:				
9.Ինձ թվում է, որ ես ի վիճակի չեմ խփել մարդու:				
10.Ես երբեք չեմ նյարդայնանում այնքան, որ առարկաներ շարտեմ:				
11.Ես միշտ ներողանիտ եմ ուրիշի թերություններին:				
12.Եթե ինձ դուր չեն գալիս սահմանված կանոնները, ես ուզում եմ խախտել դրանք:				
13.Ուրիշները կարող են գրեթե միշտ օգտվել բարենպաստ հանգամանքներից:				
14.Ես ինձ պահում եմ զգույշ այն մարդկանց հետ, որոնք ինձ վերաբերվում են սպասվածիցս ավելի բարյացկամ:				
15.Ես հաճախ համամիտ չեմ լինում մարդկանց հետ:				
16.Երբեմն ունենում եմ այնպիսի մտքեր, որոնցից ամաչում եմ:				
17.Եթե ինչ-որ մեկը ինձ խփի առաջինը, ես նրան չեմ պատասխանի:				
18.Երբ ես գայրանում եմ, ես շրիսկացնում եմ դռները:				

19. Ես ավելի դյուրագրգիռ եմ քան թվում է:				
20. Եթե ինչ-որ մեկը իրենից պետ է երևակայում, ես գործում եմ նրան հակառակ:				
21. Ինձ մի փոքր վշտացնում է իմ բախտը:				
22. Ես մտածում եմ, որ շատ մարդիկ ինձ չեն սիրում:				
23. Ես չեմ կարող հեռու մնալ վիճաբանությունից, եթե մարդիկ ինձ հետ համաձայն չեն:				
24. Մարդիկ որոնք խույս են տալիս աշխատանքից, պետք է մեղքի զգացում ունենան:				
25. Նա, ով վիրավորում է ինձ և իմ ընտանիքը, կռվի առիթ է ստեղծում:				
26. Ես ընդունակ չեմ անբաղաբավարի կատակներ անելու:				
27. Ինձ պարտում է զայրույթը, երբ ինձ վրա ծիծաղում են:				
28. Երբ որ մարդիկ իրենց պետի են երևակայում, ես անում եմ ամեն ինչ, որպեսզի նրանք չմեծամտանան:				
29. Գրեթե ամեն շաբաթ ես տեսնում եմ մարդկանց, ովքեր ինձ դուր չեն գալիս:				
30. Բավականին շատ մարդիկ նախանձում են ինձ:				
31. Ես պահանջում եմ, որ մարդիկ հարգեն ինձ:				
32. Տանջվում եմ այն մտքից, որ քիչ եմ անում ծնողներին համար:				
33. Մարդիկ, որոնք ինձ անընդհատ հոգեհան են անում արժանի են, որ մի հատ իրենց քթին տաս: արժանի են պատիժի				
34. Ես երբեք մոայլ չեմ լինում զայրույթից:				
35. Երբ ինձ վերաբերվում են ավելի վատ, քան ես արժանի եմ, ես դրանից չեմ վշտանում:				
36. Եթե մեկը ինձ հունից հանում է, ուշադրություն չեմ դարձնում:				
37. Երբեմն ինձ խեղդում է նախանձը, չնայած ես դա ցույց չեմ տալիս:				
38. Երբեմն թվում է, որ ինձ վրա ծիծաղում են:				
39. Նույնիսկ, երբ ես ջղայնանում եմ, չեմ օգտագործում կրպիտ արտահայտություններ:				
40. Ես ուզում եմ, որ մեղքերս ներվեն:				

41. Ես հազվադեպ եմ պատասխանում, նույնիսկ եթե ինձ խփում են:				
42. Երբ չի ստացվում ինչպես ուզում եմ, երբեմն վիրավորվում եմ:				
43. Երբեմն մարդիկ ինձ նյարդայնացնում են միայն իրենց ներկայությունով:				
44. Չկան մարդիկ, որոնց ես իսկապես ատում եմ:				
45. Իմ կարգախոսն է. ., Երբեք չվատահեղ ուրիշներին. .:				
46. Եթե ինչ-որ մեկը նյարդայնացնում է ինձ, ես պատրաստ եմ ասել նրան այն ամեն ինչ մտածում եմ նրա մասին:				
47. Ես շատ բաներ եմ անում, որոնց համար հետո զղջում եմ:				
48. Եթե ես զայրանում եմ, կարող եմ խփել որևէ մեկին:				
49. Փոքր տարիքից ես երբեք չեմ ցուցաբերել զայրույթի պոռթկումներ:				
50. Հաճախ ինձ զգում եմ վառողով լի տակառի պես, որը պատրաստ է պայթել:				
51. Եթե բոլորն իմանային թե ես ինչ եմ զգում, ինձ կհամարեին մի մարդ, որի հետ շատ դժվար է հաշտվել՝ լեզու գտնել:				
52. Ես միշտ մտածում եմ թե ինչ գաղտնի պատճառներ են ստիպում մարդկանց ինչ-որ հաճելի բան անել ինձ համար:				
53. Երբ ինձ վրա բղավում են, ի պատասխան, ես նունպես սկսում եմ բղավել:				
54. Անհաջողություններն ինձ վշտացնում են:				
55. Ես կովում եմ ոչ ավել, ոչ պակաս քան ուրիշները:				
56. Ես կարող եմ հիշել դեպքեր, երբ այնքան ջղայնացած եմ եղել, որ վերցրել եմ առաջին պատահած իրը և կտորել այն:				
57. Երբեմն ես զգում եմ, որ պատրաստ եմ առաջինը սկսել կոխվել:				
58. Երբեմն զգում եմ, որ կյանքը անարդար է իմ հանդեպ:				
59. Նխկինում մտածում էի, որ մարդկանց մեծամասնությունը ճիշտ է խոսում, իսկ հիմա ես դրան չեմ հավատում:				
60. Ես կշտամբում եմ միայն զայրույթից:				
61. Երբ ես ճիշտ չեմ վարվում, խիղճս ինձ տանջում				

է:				
62. Եթե իմ իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ է ֆիզիկական ուժ գործադրել, ես այդպես էլ կվարվեմ:				
63. Երբեմն զայրույթս արտահայտում եմ սեղանին բռնցքս խփելով:				
64. Լինում եմ կոպիտ, այն մարդկանց հետ ովքեր ինձ դուր չեն գալիս:				
65. Ես չունեմ թշնամիներ, որոնք կցանկանային ինձ վնասել:				
66. Ես չեմ կարողանում մարդուն ցույց տալ իր տեղը, նույնիսկ եթե նա արժանի է դրան:				
67. Ես հաճախ մտածում եմ, որ սխալ եմ ապրել:				
68. Ես ճանաչում եմ այսփոխ մարդկանց, ովքեր ի վիճակի են ինձ ներքաշել կովի մեջ:				
69. Ես չեմ վշտանում մանրուքներից:				
70. Ես հազվադեպ եմ մտածում, որ մարդիկ փորձում են ինձ զայրացնել կամ վիրավորել:				
71. Ես հաճախ սպառնում եմ մարդկանց, սակայն չեմ պատրաստվում այն իրականացնել:				
72. Վերջին ժամանակները ես տաղտկալի եմ դարձել:				
73. Վեճի մեջ ես հաճախ ձայնս բարձրացնում եմ:				
74. Սովորաբար փորձում եմ թաքցնել իմ վատ վերաբերմունքը մարդկանց նկատմամբ:				
75. Ես ավելի լավ է համաձայնվեմ որևէ բանի հետ, քան վիճեմ:				

Հարցաշարը կազմելիս հեղինակները առաջնորդվել են հետևյալ սկզբունքներով՝

1. Հարցը կարող է վերաբերվել ագրեսիվության որևէ մեկ ձևին
2. Հարցերը կազմվում են այնպես, որ հնարավորինս բացառվի հասարակության ընդունման ազդցությունը:

Հարցաշարի բանալին տրված է ստորև բերված աղյուսակում յուրաքանչյուր համապատասխանություն գնահատվում է մեկ միավորով:

Թշնամանքի մակարդակը գնահատվում է 5-րդ և 6-րդ սանդղակների գումարի չափով, իսկ ագրեսիվությունը ներառում է 1, 3, 7 սանդղակները: Ագրեսիվության նորման 21 ± 4 միավոր է, իսկ թշնամանքի՝ $6.5-7 \pm 3$

Ֆիզիկական ազդեցիկա	Անտուրակի ազդեցիկա	Գրգռականություն	Նեգատիվիզմ	Վիրավորանք	Կասկածանտություն	Վերբալ ազդեցիկա	Մեղքի զգացում
1	2	3	4	5	6	7	8
9 ոչ	10	11 ոչ	12	13	14	15	16
17 ոչ	18	19	20	21	22	23	24
25	26 ոչ	27	28	29	30	31	32
33	34	35 ոչ	36 ոչ	37	38	39 ոչ	40
41 ոչ	42	43		44 ոչ	45	46	47
48	49 ոչ	50		51	52	53	54
55	56	57		58	59	60	61
62	63	64			65 ոչ	66 ոչ	67
68		69 ոչ			70 ոչ	71	
		72				73	
						74 ոչ	
						75 ոչ	

ՀՈԳԵԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՍՏ /Ըստ Այգենկի/

Հրահանգ. Ուշադիր կարդացեք ստորև բերված նախադասություններից յուրաքանչյուրը և նշեք համապատասխան սյունակում, թե Ձե՞Ձ ԻՆՉՊԵՍ ԵՔ ՉԳՈՒՄ ՍՈՎՈՐԱԲԱՐ: Հարցերի մասին երկար մի մտածեք, քանի որ ճիշտը և սխալ պատասխաններ չկան՝:

		Համապատասխանում է	Համապատասխանում է, ոչ այնքան	Չի համապատասխանում
1.	Ես ինձ վստահ չեմ զգում:			
2.	Մանրությունների պատճառով հաճախ եմ կարմրում:			
3.	Ես անհանգիստ եմ քնում:			
4.	Հեշտ եմ հուսալքվում:			
5.	Անհանգստանում եմ երևակայական անախորժությունների համար:			
6.	Ինձ վախեցնում են դժվարությունները:			
7.	Սիրում եմ փորձել իմ թերությունները:			
8.	Ինձ հեշտ է համոզել:			
9.	Ես կասկածամիտ եմ:			
10.	Դժվարությամբ եմ տանում սպասողական վիճակը:			
11.	Հաճախ ինձ ելանելի վիճակը անելանելի է թվում:			
12.	Անախորժությունները ինձ շատ վշտացնում են և ես հուսալքվում եմ:			
13.	Մեծ անախորժությունների ժամանակ ես անհիմն ինձ մեղադրում եմ:			
14.	Դժբախտություններն ու անհաջողություններն ինձ ոչ իմ բան չեն սովորեցնում:			
15.	Ես հաճախ եմ հրաժարվում պայքարից, որակավորելով այն ոչ արդյունավետ:			
16.	Ես հաճախ ինձ անպաշտպան եմ զգում:			

17.	Երբեմն ես հուսահատվում եմ:			
18.	Դժվարությունների ժամանակ ես շփոթվում եմ, մոլորվում եմ:			
19.	Կյանքի դժվար պահերին ինձ երեխայի պես եմ պահում, ուզում եմ որ ինձ խղճան:			
20.	Բնավորության թերությունները անուղղելի են ինձ թվում:			
21.	Ինձ եմ պահում վերջին խոսքի իրավունքը:			
22.	Հաճախ խոսակցության ժամանակ ես ընդհատում եմ զրուցակալցիս:			
23.	ԻՆձ հեշտ է գայրացնել:			
24.	Սիրում եմ ուրիշներին նկատողություն անել:			
25.	Ուզում եմ հեղինակություն լինել շրջապատի համար:			
26.	Չեմ բավարարվում քչով, ուզում եմ ամենաշատը:			
27.	Երբ գայրանում եմ, ինձ վատ եմ տիրապետում:			
28.	Գերադասում եմ լավ ղեկավարել, քան լավ ենթարկեցնել:			
29.	Իմ ժեստերը կոպիտ են և կտրուկ:			
30.	Ես վրեժխնդիր եմ:			
31.	Ես դժվար եմ փոխում իմ սովորությունները:			
32.	Դժվար եմ փոխարկում ուշադրությունս մեկ այլ առարկայի:			
33.	Շատ զգույշ եմ վերաբերվում ամեն նորոյթին:			
34.	Ինձ դժվար է վերահամոզել:			
35.	Հաճախ իմուղեղից դուրս չեն գալիս այն մտքերը, որոնցից պետք է ազատվել:			
36.	Դժվար եմ մերվում մարդկանց հետ:			
37.	Պլանների անգամ աննշան խաղտումներից ես հուսահատվում եմ:			
38.	Հաճախ ես համառություն եմ ցուցաբերում:			
39.	Ես դժկամորեն եմ դիսկլի դիմում:			
40.	Ես ծանր եմ տանում իմ ընդունված ռեժիմի շեղումները			

Արդյունքների մշակում:

Հոգեկան վիճակների ինքնագնահատման ախտորոշումը ըստ Այզենկի բաղկացած է 40 հարցերից, համաձայն որոնց գնահատվում են տագնապելիության, ֆրուստրացիայի, ագրեսիվության և կարկամվածության մակարդակները:

1-10 հարցը- գնահատում է տագնապայնությունը

11-20 հարցը – գնահատում է ֆրուստրացիան

21-30 հարցը – գնահատում է ագրեսիվությունը

31-40 հարցը – գնահատում է կարկամվածությունը/ ռիզիկոությունը

I. տագնապայնություն – 0-7 միավոր – տագնապային չեք, 8-14 միավոր - միջին տագնապայնություն, 15-20 միավոր - ունեք բարձր տագնապայնություն:

II. Ֆրուստրացիա – 0-7 միավոր - չունեք բարձր ինքնագնահատական, կայուն եք անհաջողությունների նկատմամբ, չեք վախենում դժվարություններից; 8-14 միավոր – ֆրուստրացիան միջին մակարդակի է; 15-20 միավոր – դուք ունեք ցածր ինքնագնահատական, խուսափում եք դժվարություններից, վախենում եք անհաջողություններից, ենթարկված եք ֆրուստրացիայի:

III. Ագրեսիվություն- 0-7 միավոր- դուք հանգիստ եք, զսպված; 8-14 միավոր- ագրեսիվության միջին մակարդակ; 15-20 միավոր – դուք ագրեսիվ եք, անզուսպ, մարդկանց հետ շփվելու և աշխատելու դժվարություններ ունեք:

IV. Ռիզիկոություն – 0-7 միավոր- կարկամվածությունը բացակայում է, հեշտությամբ անցում եք կատարում մի գործունեությունից մյուսին; 8-14 միավոր – միջին մակարդակը; 15-20 միավոր – ուժեղ արտահայտված կարկամվածություն, վարքի, դատողությունների, հայքքների կայունություն, նույնիսկ եթե նրանք չեն համապատասխանում իրավիճակին, կյանքին: Ձեզ հակացուցված է աշխատանքի փոփոխումը, ընտանիքում փոփոխությունը:

**ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ /ԸՍՏ ԲՈՒԴԱՍԻԻ/**

ԹԵՍՏԱՅԻՆ ՆՅՈՒԹ

Ընթացակարգ: Տրված 48 հատկանիշներից ընտրեք 20 հատկանիշներ, որոնցով կցանկանայիք նկարագրել Ձեր իդեալը և տեղադրեք բլանկի 2-րդ սյունակում: Բնականաբար այդ շարքում իրենց տեղը կգտնեն նաև բացասական հատկանիշները: Այնուհետև այդ 20 հատկանիշները տեղադրեք առաջին սյունակում ըստ կարևորության դասավորելով ներքևից վերև, օգտագործելով ռանգավորման մեթոդը (20-րդ տեղում կլինի Ձեզ համար ամենագրավիչ հատկանիշը, 19-ում՝ ավելի քիչ գրավիչը, 18-ում՝ էլ ավելի քիչ գրավիչը և այդպես մինչև մեկը): Դրանից հետո երրորդ սյունակում կառուցեք սուբյեկտիվ շարք, որտեղ Ձեր ընտրած 20 հատկանիշները տեղադրեք ըստ Ձեզ մոտ արտահայտվածության աստիճանի (20-րդ տեղում կլինի Ձեզ մոտ ամենաարտահայտված հատկանիշը, 19-ում՝ ավելի քիչ արտահայտվածը և այդպես շարունակ):

Կոկիկություն	Անհոգություն	Խոհունություն	Ընկալողականություն
Տաքարյունություն	Հպարտություն	Կոպտություն	Մարդաստիրություն
Բարիություն	Կենսուրախություն	Հոգատարություն	Նախանձություն
Ամոթխածություն	Հիշաճարություն	Անկեղծություն	Քմահաճություն
Դյուրահավատություն	Դանդաղաշարժություն	Երազկոտություն	Կասկածամտություն
Վրեժխնդրություն	Հուսալիություն	Համառություն	Նրբություն
Անվճռականություն	Անզսպվածություն	Հմայք	Նեղացկոտություն
Ձգուշություն	Գթասրտություն	Կասկածամղություն	Մանրախնդրություն
Սիրալիություն	Սանճարձակություն	Խոհեմություն	Ինքնաքննադատություն
Ձսավածություն	Արդարություն	Կարեկցանք	Ամաչկոտություն
Գործակալություն	Աշխատասիրություն	Վախկոտություն	Համոզվածություն
Տարվածություն	Չորություն	Սկզբունքայնություն	Էգոիզմ

ԲԼԱՆԿ

Անուն Ազգանուն _____ Տարիք _____

Ամսաթիվ _____

X_1 Ես-հղեալ	Հատկություններ	X_2 ԵՍ-իրական	$d=X_1-$ X_2	d^2
1	1	1		
2	2	2		
3	3	3		
4	4	4		
5	5	5		
6	6	6		
7	7	7		
8	8	8		
9	9	9		
10	10	10		
11	11	11		
12	12	12		
13	13	13		
14	14	14		
15	15	15		
16	16	16		
17	17	17		
18	18	18		
19	19	19		
20	20	20		
				Σd^2

Արդյունքների մշակում

Արդյունքների մշակման նպատակն է բացահայտել անձի իդեալական և իրականես-ի հատկանիշների գնահատականների միջև կապերը, ինչը բացահայտվում է ռանգային կոռելյացիայի գործակցով: Գործակիցը հաշվելու համար սկզբում պետք է գտնել տարբերությունը $d^{x1} - d^{x2}$ ըստ յուրաքանչյուր հատկանիշի և արդյունքները գրել d սյունակում: Հետո յուրաքանչյուր սյունակում ստացված տարբերությունը d բարձրացնել քառակուսի և գրել արդյունքները d^2 սյունակում: Որից հետո պետք է հաշվել ռանգերի ընդհանուր գումարը և ներմուծել ստորև բերված բանաձևի մեջ.

$$R = \frac{1-6 * \sum d^2}{N (n^2-1)}$$

Որտեղ R -ը կոռելյացիայի գործակիցն է, անձի ինքնագնահատականի մակարդակի ցուցանիշը;

n - անձի ընտրած հատկանիշների քանակը:

Եթե հատկանիշների քանակը հավասար է 20 – ի, ապա վերոնշյալ բանաձևը ստանում է հետևյալ պարզեցված տեսքը՝

$$R = 1-0,00075 * \sum d^2$$

Արդյունքների մեկնաբանում

Ռանգային կոռելյացիայի գործակիցը r –ը կարող է գտնվել -1 -ից $+1$ -ի միջակայքում: Եթե գործակիցը գտնվում է -0.37 -ից $+0.37$ –ի տիրույթում /0,05 հավաստիության դեպքում/, ապա այն խոսում է իրական և երևակայական հատկանիշների անձի ունեցած պատկերացումների միջև առկա թույլ կապերի մասին /կամ այդ կապերի բացակայության մասին/:

Այսպիսի տվյալների պատճառ կարող է հանդիսանալ նաև հրահանգի ոչ ճիշտ իարականացումը: Սակայան եթե տվյալները ճիշտ են ստացվել են, ապա կարելի է ասել, որ անձի մոտ իդեալական Ես – ի և իրական Ես – ի մասին պատկերացումները հստակ և տարանջատված չեն:

Եթե գործակիցը $+0.38$ – ից $+1$ տվյալների միջակայքում է գտնվում, ապա նշանակում է, որ առկա է դրական կապ անձի իդեալական և իրական Ես-երի մասին ունեցած պատկերացումներում: Այս ցուցանիշները մեկնաբանվում են որպես

անձի ադեկվատ ինքնագնահատականի դրսևորումներ: Ընդ որում +0.39-ից մինչև +0.89-ը համարվում է մի փոքր բարձր, իսկ +0.9 մինչև +1 – ը համարվում է ոչ ադեկվատ բարձր ինքնագնահատական:

-0.38 –ից մինչև -1 միավորների տիրույթում ստացված տվյալները խոսում են իդեալական Ես-ի և իրական Ես-ի մասին անձի ունեցած պատկերացումների միջև առկա բացասական կապի մասին: Այսինքն արտացոլում է անահամապատասխանությունը կամ տարբերությունը անձի պատկերացումների այն մասին, թե ինչպիսին է ուզում լինել անձը, և թե ինչպիսին է իրականում: Այս անահամապատասխանությունը մեկնաբանվում է որպես իջեցված կամ ցածր ինքնագնահատական: Միավորները որքան մոտ են -1 – ին այնքան ինքնագնահատականը ցածր է և այնքան անահամապատասխանությունը բարձր է:

Ներկայացված մեթոդիկայում անձի ինքնագնահատականի, նրա մակարդակի և համապատասխանության ուսումնասիրումը որոշվում է որպես Ես –իդեալականի և Ես– իրականի միջև հարաբերություն: Մարդու պատկերացումները իր մասին, որպես կանոն, թվում են նրան համոզիչ անկախ նրանից թե դրանք հիմնված են օբյեկտիվ գիտելիքների թե սուբյեկտիվ կարծիքի վրա, իրական են, թե կեղծ: Հատկանիշները, որը մարդը վերագրում է ինքն իրեն, միշտ չէ որ ադեկվատ են: Ինքնագնահատման գործընթացը կարող է իրականանալ երկու ճանապարհով.

1. Համադրելով սեփական հավակնությունների մակարդակը գործունեության արդյունքում ստացված օբյեկտիվ տվյալների հետ;
2. Համեմատելով ինքն իրեն ուրիշ մարդկանց հետ:

Սակայն, անկախ նրանից թե ինքնագնահատականի հիմքում ինչ դատողություններ են՝ սեփական թե որիշների դատողությունների մեկնաբանություն, անհատական իդեալներ թե սոցիալ-մշակութային ստանդարտներ, ինքնագնահատականը միշտ կրում է սուբյեկտիվ բնույթ, ընդ որում դրա ցուցանիշներ են հանդիսանում ադեկվատությունն ու մակարդակը:

Ինքնագնահատականի ադեկվատությունը արտահատում է մարդու իր մասին պատկերացումների և օբյեկտիվ պատկերացումների համապատասխանության աստիճանը:

Ինքնագնահատականի մակարդակը արտահատում է անձի իր մասին ունեցած իրական և իդեալական, ցանկալի պատկերացումների աստիճանը: Աղեկվատ ինքնագնահատականը, մի փոքր բարձր միտումով, կարելի համարել մարդու դրական վերաբերմունքի, ինքնահարգանքի, ինքնարժեքի և սեփական լիարժեքության զգացումի ցուցանիշ: Ցածր ինքնագնահատականը կարող է պայմանավորված լինել բացասական վերաբերմունքով ինքն իր նկատմամբ, սեփական անձի չընդունման հետ, թերարժեքության զգացողության առկայության հետ :

Այսպիսով կարող ենք ասել որ ինքնագնահատականի ձևավորման գործընթացում կարևոր դեր ունի իրական և իդեալական Ես - կերպարների համադրումը: Այդ պատճառով նա ով իրականում հասնում է այնպիսի բնութագրումների, որոնք համապատասխանում են իդեալին, կունենա բարձր ինքնագնահատական: Եթե մարդը արդյունավետ ռեֆլեկսում է այդ բնութագրերի և իրական նվաճումների ճեղքումը, ապա այդ դեպքում կձևավորվի ցածր ինքնագնահատական:

Ինքնագնահատականը և անձի իրեն վերաբերմունքը պայմանավորված են անձի հավակնությունների մակարդակով, դրդապատճառային համակարգով և հուզական առանձնահատկություններով: Ինքնագնահատականից կախված է անձի կենսափորձի մեկնաբանությունը և նրա սպասումները իրենից և ուրիշներից:

Դեռահասային ագրեսիվության շտկման թրենինգ “Ճանաչիր ինքդ քեզ”

Թրենինգի տևողությունը – 5 շաբաթ, շաբաթական 2 անգամ 1 ժամ (10 հանդիպում՝ 10 ժամ):

Յուրաքանչյուր հանդիպում կազմված է երեք մասերից՝

- ներածական մաս;
- հիմնական աշխատանք;
- վերջաբան:

Թրենինգի **նպատակն է** սովորեցնել դեռահասներին ձերբազատվել իրենց բացասական հույզերից ինքնաճանաչման և անձնային աճի միջոցով, ձևավորել դեռահասի կենսունակ և հասարակության մեջ հաջող հարմարվող “Ես”-ը, որը կբերի անձնային աճի:

Թրենինգի **խնդիրներն են՝**

- Ստեղծել պայմաններ ինքնաճանաչման ձգտման ձևավորման համար, ինչպես նաև իրենց ներքին աշխարհի մեջ ընկղմվելու և կողմնորոշվելու համար:
- Հույզերի և զգացումների մասին մասնակիցների գիտելիքների ընդլայնում, ոչ կոնստրուկտիվ վարքի, ագրեսիվ հակազդումների գիտակցումը, ինքնակարգավորման հմտությունների զարգացում:
- Ռեֆլեքսիայի զարգացում, ագրեսիվ միջավայրում կոնստրուկտիվ հմտությունների և ունակությունների ձևավորումը և ամրապնդումը:
- Ինքնագնահատականի բարձրացում, տազնապալիության և հոգեհուզական լարվածության իջեցում, կամային որակների ձևավորում:
- Աջակցել իրենց կյանքի նպատակների և հեռանկարի, դրանց հասնելու ուղիների և միջոցների գիտակցմանը:

Մասնակիցների կազմը:

Թրենինգի մասնակիցներ՝ դեռահասներ:
Խմբի օպտիմալ քանակը՝ 10-12 հոգի:

Գերադասելի է պարապմունքները անցկացնել երկսեռ խմբի հետ, չնայած թույլատրելի է նաև միասեռ:

Ցանկալի է, որպիսի խմբի մասնակիցները խիստ չտարբերվեն միմյանցից տարիքով:

Թրենինգի անցկացման ձևը՝ խմբային թրենինգ:

Կիրառվող տեխնիկաներ - համալիր շտկող միջոցառումներ ներառյալ ռելաքսացիոն շնչառական տեխնիկաներ, խաղեր, վարժություններ, թեսթավորում, հարցարաններ, պրոյեկտիվ մեթոդիկաներ:

Ախտորոշում

Ազդեսիվության և ազդեսիվ վարքի ախտորոշում՝

- Բասս-Պերիի հարցաշար;
- Հոգեկան վիճակների ախտորոշում ըստ Այզենկի;
- Ազդեսիվությունը հարաբերություններում ըստ Ասինգերի;
- Ռեակտիվ և անձնային ազդեսիվության ախտորոշում ըստ Սպիլբերգեր –Խանինի;
- “Գոյություն չունեցող կենդանի” պրոյեկտիվ մեթոդը;
- “Վազների Ձեռքի թեստ” պրոյեկտիվ մեթոդը;

Ինքնագնահատականի ախտորոշում՝

- Ինքնագնահատականի ուսումնասիրում ըստ Բուդասիի թեստի;
- Ինքնագնահատականի ուսումնասիրում ըստ Կազանցկայի թեստի;
- Ինքնագնահատականի ինքնորոշում

Տագնապալիության ախտորոշում՝

- Սպիլբերգեր Խանինի ռեակտիվ և անձնային տագնապալիության ախտորոշում;
- Թեյլորի թեստ
- Լյուշերի գունային թեստ:

Ung. հարցում

Շտկում

Հաշվի առնելով ազդեսիվության առաջացման և զարգացման պատճառները, ինչպես նաև սեռային պատկանելիությունը, կառուցել շտկող միջոցառումների ծրագիր: Ընդ որում

նպատակային է տղաների համար ծրագիրը կազմելիս ներառել ֆիզիկական տարրեր պարունակող վարժություններ, որոնք ուղղված են ֆիզիկական և բացահայտ ագրեսիան շտկելուն, իսկ աղջիկների համար շտկող միջոցառումները պետք է ուղղված լինեն թաքնված և անուղղակի ագրեսիան շտկելուն:

Շտկող միջոցառումներ ուղղված հոգեհուզական լարվածության և բացասական հույզերի նվազեցմանը:

Տագնապայիության նվազեցմանը՝

Ա. Մկանային լարվածության դուրս բերումը;

Բ. Շնչառական տեխնիկաների կիրառումը;

Այս մեթոդները կարելի է օգտագործել նաև ուսուցիչների հոգեհուզական լարվածությունը նվազեցնելու համար: Եվ ինչը շատ կարեևոր է, որ այն կարելի է անցկացնել նույնիսկ դասի ժամին:

Ինքնագնահատականի բարձրացմանը

Ա. Իմ արևը

Բ. Իմ կարողությունները

Գ. Ձեր կեցվածքը

Դ. Ձեր արժեքավոր հատկանիշները

Ե. Ձեր ինքնաընկալումը

Զ. Տաք արթոն

Ագրեսիայի նվազեցմանը

Ա. Հրոցի,

Բ. Ներքին ճիչը

Գ. Մամուլ

Դ. Դանիական բոքս

Ե. Թղթե գնդակներ

Զ. Գոջիների վագրը

Է Երաժշտական թերապիա

Լուսինե Սամվելի Ստեփանյան

**ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
Մեթոդական ուղեցույց**

Համակարգչային ձևավորումը՝ Լ.Ս. Ստեփանյանի

**Ստորագրված է տպագրության՝ 07.12.2011թ
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսետ:
Տպագր. 5 մամուլ,
Տպաքանակ՝ 150:**

Երևան